

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ARMENIAN CONSTITUTIONAL RIGHT-PROTECTIVE
CENTRE NGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
Հ Ա Յ Ե Յ Ա Կ Ա Ր Գ

Վաճառք - 2020



EASTERN PARTNERSHIP
Civil Society Forum



Funded by
the European Union



ՀՏԴ 342.4

ԳՄԴ 67.400.1

Մ 283

Հեղինակ-փորձագետ
Ձևավորումը՝
Նկարը՝

*Գևորգ Գազիկի Մանուկյան
Նաիրա Սարգսի Ավետիքյանի
Հունան Սարգսի Կիրակոսյանի*

Մանուկյան Գ. Գ.

Մ 283 Հայաստանի Հանրապետության երկրորդ

Սահմանադրության հայեցակարգ

Գ. Գ. Մանուկյան.- Վանաձոր: ՀՄԻԿ ՀԿ, 2020.-87 էջ:

Մշակվել է՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն (ՀՄԻԿ) ՀԿ նախագահ, իրավունքի փորձագետ Գևորգ Մանուկյանի կողմից ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում, Եվրոպական միության աջակցությամբ: Հայեցակարգի բովանդակությունը բացառապես հեղինակի կարծիքն է և կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:

The Conception of the Second Constitution of Armenia contributes to the governing reform of the management system of Armenia by developing the second constitution that provides a real devision of management functions, an independent judiciary, Rule of Law and an effective system for human rights protection.

Դ 67.400.1

ISBN 978-9939-1-1166-7

© «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն»
(ՀՄԻԿ) ՀԿ, 2020

Armenian Constitutional Right-Protective Centre (ACRPC) NGO

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ	4
Խոսք երախտիքի	6
ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԲԱՆ	9
ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	11
ԳԼՈՒԽ 3. Հ Հ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	14
ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ	20
4. 1. ՀՈԳԵՎՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ.....	21
4. 2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.....	28
4. 2. 1. Եզրույթի բովանդակության պատմական զարգացումը	28
4. 2. 2. Եզրույթի ժամանակակից ընկալումը.....	31
4. 3. ՆՈՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ	35
4. 4. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ	40
4. 4. 1. Պատմական համառոտ ակնարկ	40
4. 4. 2. Բարի կամքի առեղծվածը Հայաստանում	42
4. 4. 3. Իշխանության տարանջատման տեսության հիմնադրությունները	45
4. 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	52
4. 5. 1. Մարդու իրավունքների էությունը և հատկանիշները.....	52
4. 5. 2. Մարդու իրավունքների գործնական պաշտպանության հիմնախնդիրները	55
4. 6. ԸՆԴԵՐՔԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ.....	58
ԳԼՈՒԽ 5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	61
SUMMARY of Conception of the Second Constitution of the Republic of Armenia.....	69
Օգտագործված գրականություն.....	86

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ	Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմ
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ նահանգներ
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԶՕ	Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմ
ՊԲՎԱ	Պետական բյուջեից վարձատրվող անձիք
ՊԲՊԿ	Պետական բյուջեով պահվող կառույցներ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԼՂՀ	Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ
ԿԳՄՍ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԱՍԵ	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇ	Հայոց համազգային շարժում
ՀՄԻԿ	Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՄԻԽՄԴ	Մարդու իրավունքների և խաղաղության միջազգային դպրոց
ՄԻՀԴ	Մարդու իրավունքների հայկական դպրոց
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային

	կազմակերպություն
ՄԴ	Սահմանադրական դատարան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Սույն Հայեցակարգի հիմնադրույթները տարբեր ձևաչափերով մշակվել, քննարկվել ու վերամշակվել են անցած ավելի քան երկու տասնամյակների ընթացքում *Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի (ՀՄԻԿ) www.acrpc.am Մարդու իրավունքների և խաղաղության միջազգային դպրոցի (ՄԻԽՄԴ) http://acrpc.am/index.php?action=pages&parent_id=2&id=12* խորացված դասընթացների, տասնյակ համաժողովների, սեմինարների, կյոթ սեղանների ընթացքում, որոնց մասնակցել են հարյուրավոր գիտնականներ, փորձագետներ, ՔՀԿ ակտիվիստներ, մանկավարժներ, Մարդու իրավունքներ դասավանդող ուսուցիչներ հանրապետության բոլոր մարզերից և արտերկրից : Զգալի է եղել «Վասն արդարության» <http://vasnardaroutean.am/> իրավական գիտամեթոդական հանդեսի դերը: Հրատարակվել են մարդու իրավունքների և մարդու իրավունքների և խաղաղության կրթության, սահմանադրության և սահմանադրականության թեմաներով դասագիրք, մենագրություն, զեկույցներ, մեթոդական ուղեցույցներ, կատարվել են թարգմանություններ, մշակվել են ուսումնական ծրագրեր, հրատարակվել են փորձի փոխանակման համաժողովների նյութերի ժողովածուներ: Հետևաբար, սույն Հայցակարգը պետք է համարել ոչ թե մեկ փորձագետի, այլ մասնագիտական մեծ թիմի ավելի քան երկու տասնամյակների քրտնաջան աշխատանքի արդյունք:

Այդ ծավալուն աշխատանքի հիման վրա և կառավարման համակարգում հիմնարար լուծումների

մտահոգությամբ է, որ որոշ հարցերում մեզ թույլ ենք տվել դուրս ելնել ոլորտում ընդունված մոտեցումների շրջանակներից: Ավելին, համարձակվում ենք ենթադրել, որ Հայեցակարգի որոշ առաջարկներ (եջ՝ 61 - 68) կարող են օգտակար լինել նաև այլ երկրների կառավարման համակարգերի բարելավման համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Եվրոպական միությանը, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլասֆորմի քարտուղարությանը և գործադիր տնօրեն Հերիքնազ Հարությունյանին՝ տրամադրած փոքրիկ, սակայն նշանակությամբ՝ խոշոր դրամաշնորհի և ծրագրի իրականացման ընթացքում ցույց տված աջակցության համար:

Շնորհակալություն ենք հայտնում ՀՄԻԿ նախագահության բոլոր անդամներին և մասնավորապես՝ ՀՄԻԿ փոխնախագահ, փաստաբան Արայիկ Պապիկյանին, նախագահության անդամներ Հակոբ Հակոբյանին և Աշոտ Հակոբյանին, կազմակերպված երկու կլոր – սեղան քննարկումների բոլոր մասնակիցներին, ովքեր ժամանակ են տրամադրել հայեցակարգի արդյունավետ քննարկումների, վերլուծությունների համար: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում կառավարման փորձագետ Սամվել Գրիգորյանին, իրավապաշտպան Խաչատուր Մարոգյանին, Էկոլոգ Տիրան Սահակյանին և հասարակական-քաղաքական ակտիվիստ Տիգրան Գրիգորյանին (ով այդ օրերին գորակոչվեց ռազմաճակատ՝ պաշտպանելու Հայրենիքը) արժեքավոր խորհուրդների, առաջարկների համար:

Հայեցակարգը ՀՀ Կառավարության և ՀՀ Մահմանադրական քարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից ուշադրության արժանանալու դեպքում, մեր աշխատանքային թիմը պատրաստ է ձեռնամուխ լինել Հայեցակարգի հիման վրա ՀՀ նոր՝ երկրորդ սահմանադրության նախագծի մշակման աշխատանքին:

Գևորգ Մանուկյան
ՀՄԻԿ նախագահ

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԲԱՆ

«Ճանապարհ՝ դեպի սահմանադրականություն»
ծրագիրն ուղղված էր Հայաստանում կառավարման արդյունավետությանը, կառավարան գործառույթների իրական տարանջատմանը, դատական իշխանության անկախության և ժողովրդավարության ուղիով երկրի բնականոն զարգացմանը խոչընդոտող սահմանադրական դրույթների հիմնախնդրի լուծմանը:

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Անկախության Հռչակագրի ընդունումից հինգ տարի անց, 1995թ. հուլիսի 05-ին համաժողովրդական հանրաքվե անցկացվեց ՀՀ առաջին Սահմանադրության ընդունման համար: Հետագայում, 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 06-ի հանրաքվեների միջոցով Սահմանադրության մեջ կատարվեցին մասնակի փոփոխություններ: Եվս մեկ անգամ երկրի հիմնական օրենքում փոփոխություն կատարվեց, առանց հանրաքվեի, Ազգային ժողովի (ԱԺ) կողմից, 2020թ. հունիսի 22-ին¹: Այդ փոփոխությունների արդյունքում, թեև կատարվել են որոշակի բարելավումներ², սակայն, վերը նշված սահմանադրական խոչընդոտները մնացել են անսասան: Այդ մասին վկայում են անկախության ժամանակաշրջանում անցկացված գրեթե բոլոր հանրաքվեների և համապետական ընտրությունների արդյունքների անթաքույց կեղծումները, իշխանական լծակների, բռնությունների կիրառումները, արդար դատաբնության սպասող հազարավոր, այդ

¹ Այս փոփոխությունը համակարգային բարեփոխում կատարելու նպատակ չի ունեցել:

² Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներդրումը, Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնումը:

թվում՝ մի քանի տասնյակ հանրային հնչեղություն ունեցող, աղմկահարույց դատական գործերը: Այդ մասին վկայում են նաև՝ ցայժմ չբացահայտված 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության կազմակերպիչների բացահայտման գործը³, ավելի քան երեք տասնյակ պետական ու քաղաքական բարձրաստիճան գործիչների սպանությունների, «ինքնասպանությունների» դեռևս չբացահայտված լինելը: Իսկ 2008թ. մարտի 01-ի գործի⁴ վերաքննությունը սկսվեց միայն 2018թ. գարնան հեղափոխությունից հետո և դատական ներկա համակարգի պայմաններում ընթանում է դանդաղ, շարունակաբար բախվելով տարատեսակ խոչընդոտների:

Սույն ծրագիրը նպատակ է ունեցել նպաստել Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ճանապարհին առկա սահմանադրական խոչընդոտների վերացմանը՝ կառավարման գործառույթների իրական տարանջատում, անկախ դատական իշխանություն, իրավունքի տիրապետություն և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգ նախատեսող ՀՀ նոր սահմանադրության գիտականորեն հիմնավորված հայեցակարգի մշակման և ՀՀ Կառավարությանն ու ՀՀ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին ներկայացնելու միջոցով:

³ Այդ ահաբեկչությամբ ՀՀ Ազգային ժողովի դահլիճում գնդակահարվեցին երկրի վարչապետը, ԱԺ նախագահը, երկու փոխնախագահները և ԱԺ չորս պատգամավորներ:

⁴Այդ օրը՝ 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքների կեղծման դեմ բողոքող խաղաղ ցուցարարների նկատմամբ կիրառվեց հրազեն, որի արդյունքում սպանվեց տասը մարդ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Թեև Հայաստանը դարերով զրկված է եղել պետականությունից, սակայն հայ իրավական առաջավոր միտքը շարունակաբար զարգացել ու արգասավոր է եղել: Այդ մասին վկայում են նաև. Ուրարտու – Արարատյան թագավորության շրջանի սեպագիր արձանագրությունները, Սուրբ Թադեոս Առաքյալի, Սուրբ Գրիգոր Լուսավորիչի, Աշտիշատի ժողովի կանոնները, Շահապիվանի դատաստանագիրքը, Աղվանից արքա Վաչագանի կանոնական սահմանադրությունը, Սուրբ Հովհան Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսի Կանոնագիրք Հայոցը, Դավիթ Ալավկա Որդու Կանոնական օրինադրությունը, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, Սուրբ Ներսես Շնորհալի կաթողիկոսի «Թուղթ ընդհանրականը», Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառաց»-ը⁵, Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը, «Ռուսական կայսրության Հայ Գրիգորյան դավանանքի քրիստոնյաների հոգևոր ուժերի կառավարման մասին» Պոլոժենիեն, Օսմանյան կայսրության 1863թ. Հայոց ազգային սահմանադրությունը⁶:

⁵ Այն, որ Շահամիր Շահամիրյանն ինքն է «Որոգայթ փառաց»-ի իրական հեղինակը, և ոչ թե իր վաղամեռիկ որդին՝ Հակոբ Շահամիրյանը, հիմնավորված է բազմաթիվ փաստերով: Տես՝ «Որոգայթ փառաց», Երևան, «Հայաստան» 2002, էջ 22-23, 249: Տես նաև՝ «Հայ իրավական մտքի գանձարան», Ռուբեն Ավագյան, Երևան 2001, Գիրք 2, էջ 6:

⁶ Նշված բոլոր աղբյուրներն առաջին անգամ առավել ամբողջական հրատարակել է իրավաբանական գիտությունների դոկտոր, Ազգային անվտանգության խնդիրների համահայկական ակադեմիայի ակադեմիկոս Ռուբեն Ավագյանն իր «Հայ իրավական մտքի գանձարան»

Այդ աղբյուրների մեծ մասը տարբեր ժամանակաշրջաններում բուն Հայաստանում և (կամ) սփյուռքահայ գաղութներում հիմնական օրենքի դերակատարում են ունեցել կամ նախատեսված են եղել ազգային, հանրային կյանքի հիմնական ոլորտներում համընդգրկուն իրավակարգավորումների համար: Օրինակ՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը որոշակի փոփոխություններից հետո 1519թ. մարտին հաստատվել է լեհ թագավոր Սիգիզմունդ Առաջինի (1506-1548) հրամանով, և կիրառվել Լեհաստանում՝ Անիից Լեհաստան արտագաղթած հայերի համար: Այդ փաստը, միաժամանակ, հիմք է տալիս պնդելու, որ Զաքարյանների շրջանի Հայաստանում նույնպես Գոշի Դատաստանագիրքը կիրառվել է: Հակառակ դեպքում, քիչ հավանական կլիներ, որ պարզապես ստեղծագործական աշխատանքը լեհ թագավորի կողմից կիրառության մեջ դրվեր իր երկրում: Կարելի է ենթադրել, որ լեհահայերը խնդրել են թագավորին, որ իրենց նախկին, առօրեական կանոնները թույլ տա կիրառել նաև Լեհաստանում և թագավորը ընդառաջել է: Իսկ դա նշանակում է, որ Վրաստանի և Հայաստանի ամիրսպասալար Զաքարե Զաքարյանը (1190 - 1212) թեև Հայաստանը չէր հռչակել անկախ պետություն և ինքն էլ չէր թագադրվել, սակայն իր խոստովանահոր՝ Մխիթար Գոշի կազմած Դատաստանագիրքը կիրառության մեջ է դրել իր ընդարձակ իշխանության սահմաններում: Այդ մասին վկայում է նաև դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Ավագյանն իր «Самоуправление,

երկհատորյակում: «Հայ իրավական մտքի գանձարան», Ռուբեն Ավագյան, Երևան 2001-2002թթ.

судопроизводство и “Statut Juris Armenici” польских армян» հոդվածում⁷:

Խորհրդային Միության (որի կազմում է եղել Հայաստանը 1920-1990թթ.) գոյության 70 տարիների ընթացքում այդ երկիրն ընդունել է չորս սահմանադրություններ՝ 1918, 1924, 1936 և 1977թթ.: Խորհրդային Հայաստանի միութենական հանրապետությունում, համապատասխանաբար, ընդունվել են սահմանադրություններ 1922թ. փետրվարի 3-ին, (որը փոփոխվել ու լրացվել է 1925թ.), այնուհետև, նոր սահմանադրություններ են ընդունվել 1937թ. մարտի 23-ին և 1978թ. ապրիլի 14-ին: Դրանք, անխուսափելիորեն, կրում էին կոմունիստական քաղաքական գաղափարախոսության կնիքը և նույնիսկ սահմանադրորեն ամրագրված էր, որ այդ երկրի միակ՝ Կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է *«հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը»*⁸: Այդ բոլոր սահմանադրությունները լինելով միութենական սահմանադրությունից բխող, ածանցյալ փաստաթղթեր, ձևական բնույթ են կրել, քանի որ միութենական հանրապետությունն ինքնիշխանության որոշակի հատկանիշեր (իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, զինանշան, դրոշ, օրհներգ) ունենալով հանդերձ, իրականում, Խորհրդային Միության կազմում եղած մյուս միութենական հանրապետությունների նման, ընդամենը ինքնավարություն էր:

⁷ Վասն արդարության, իրավական գիտամեթոդական հանդես, 2017, թիվ 75/1, էջ 5-11

⁸ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն, Երևան 1984, հոդված 6:

ՀՀ նոր՝ երկրորդ սահմանադրության սույն Հայեցակարգը մշակված է ՀՀ Անկախության Հռչակագրի⁹, հայկական իրավական մտքի հարուստ գանձարանի, սահմանադրական իրավունքի ազգային և միջազգային աղբյուրների ուսումնասիրման հիման վրա:

ՀՀ երկրորդ Սահմանադրությունը որպես տեսլական ունենալով «համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման»¹⁰ Անկախության Հռչակագրի պատգամը, պետք է արտացոլի Հայաստանի Հանրապետության ներկա տարածաշրջանային, աշխարհագրական, ռազմաքաղաքական իրադրությունը, պայմանները, ինչպես նաև Հայ ժողովրդի պատմական Հայրենիքի մեծ մասի կորստի, Հայոց Մեծ Եղեռնի դասերը և արված հետևությունները:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ վարչապետի 2020թ. փետրվարի 12-ի որոշմամբ կազմավորվել է ՀՀ *Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով*, որի առաջ խնդիր է դրվել՝ մշակել ՀՀ սահմանադրական փոփոխությունների նախագիծ: Սակայն, առկա են ծանրակշիռ հիմնավորումներ հերթական սահմանադրական բարեփոխումների փոխարեն Հայաստանի Հանրապետությունում նոր՝ երկրորդ սահմանադրություն ընդունելու համար:

⁹ ՀՀ Անկախության Հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն «Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման» համար:

¹⁰ ՀՀ Անկախության Հռչակագրի նախաբան:

Երրորդ Հանրապետությունում 1995թ. Սահմանադրության ընդունումից հետո և՛ քաղաքական ուժերի, և՛ իրավագետների կողմից շարունակաբար բարձրացվել է նոր՝ պատշաճ բովանդակությամբ, գործունե ժողովրդավար համակարգերով օժտված և իրավական, օրինական գործընթացով ընդունված սահմանադրության անհրաժեշտության հարցը: Այդ անհրաժեշտությունը հիմնավորվել է բազմաթիվ գիտական հոդվածներով ու հանրային քննարկումների ընթացքում ներկայացված գրավոր և բանավոր փաստարկներով:

3.1. Հիմնական հիմնավորումն այն է, որ գործող՝ 1995թ. ՀՀ Սահմանադրությունը էական, հիմնասյունային արատներ ունի. իրավունքի տիրապետության¹¹ (Rule of Law) ապահովման, կառավարման գործառույթների իրական տարանջատման և դրա ճյուղերի փոխհարաբերությունների համակարգային, ներդաշնակ կառուցման, դատարանների իրական անկախության ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության համակարգի գիտականորեն հիմնավորվածության և միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանության առումով: Այդ ոլորտներում առկա խնդիրները և համապատասխանաբար առաջարկվող հայեցակարգային հիմնադրույթները ներկայացվում են Հայեցակարգի համապատասխան գլուխներում:

3.2. Երկրորդ հիմնավորումը «փառաց որոգայթների»¹² սպառնալիքն է: Ցանկացած նոր իշխանության սպառնում է

¹¹ Այս եզրույթի բովանդակությունը ներկայացված է Հայեցակարգի

4.2. գլխում, էջ 28:

¹² Շահամիր Շահամիրյանի «Գիրք, որ կոչի Որոգայթ փառաց»-ի (Երևան - 2002) խորախորհուրդ վերնագիրը, դրա աշխարհաբարի թարգմանիչ,

Ժողովրդավարական արժեքներից օտարվելու, իշխանական լծակների, «փառքերի» ու վայելքների գայթակղություններին «աննկատ», սահուն կերպով հանձնվելու վտանգը: Ժողովրդին ծառայելու հանձնառությամբ իշխանության եկած որևէ ուժ չի կարող արատավոր համակարգում երկար «գոյատևել»: Ժամանակի ընթացքում նորանշանակ պաշտոնյաները կարող են գայթակղվել ու խոտորվել¹³, իսկ նախկին քաղաքական ուժերի, հետագայում, իշխանության գալու դեպքում՝ հեշտությամբ կարող են վերականգնվել նախկին արատավոր բարքերն ու կոռուպցիոն ամբողջ համակարգը:

բանասիրական գիտությունների դոկտոր, Պողոս Խաչատրյանը գրքի «Խորագրում» (էջ՝ 248) մեկնում է հետևյալ կերպ: «Այն կյանքի է կոչվել «վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան»: Նույն տեղում Խաչատրյանը ավելացնում է՝ «Որոգայթ փառաց»-ը պետք է ըմբռնել և որպէս փառասիրության կամ փառատենչության թակարդ, կամայական ու բռնակալ մարդկանց՝ ուրիշների վրա իշխելու ցանկությունները սանձահարող օրենսգիրք ու սահմանադրություն»:

¹³ 2018թ. գարնան հեղափոխությունից հետո, արդեն կան բարձրաստիճան պաշտոնյաների կողմից «խոտորվելու» դեպքեր. օրինակ՝ 2019թ. մարտին Առողջապահության փոխնախարար Արսեն Դավթյանին մեղադրանք առաջադրվեց խոշոր չափի կաշառք ստանալու համար: <https://www.azatutyun.am/a/29857139.html>, «Ազատություն» ռադիոկայան, 2019թ. ապրիլի 02:

ՀՀ ԿԳՄՄ փոխնախարար Գևորգ Լոռեցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2019թ. հունիսի 4-ից զբաղեցնելով տվյալ պաշտոնը, «Լուառ» և «Էլիտ Սպիրտ» առևտրային կազմակերպությունների սեփականատեր և գործադիր տնօրեն Հրաչիկ Քանանյանից պահանջել է 2 000 000 ՀՀ դրամ կաշառք՝ իր կողմից ընդհանուր հովանավորչության համար <https://armmlur.am/1035102/>:

Պետական վերահսկողական ծառայության նախկին պետ Դավիթ Սանասարյանին մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար:

3.3. Երրորդ հիմնավորումը սահմանադրության 1995թ. ընդունման և հետագայում՝ 2005 և 2015թթ. սահմանադրական բարեփոխումների հանրաքվեների արդյունքների կեղծիքի սև բիծն ու խարանձ է: Պետության հիմնական օրենքի կեղծիքով ընդունվելու իրողությունն անհանդուրժելի է: Ի վերջո, սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որը դրվում է Աստվածաշունչ մատյանի հետ կողք – կողքի՝ համարվելով այնպիսի սրբություն, որի վրա նույնպես, պաշտոնի ստանձնման արարողության ժամանակ երդվում է պետության բարձրագույն պաշտոնյան:

Կեղծիքների վերաբերյալ փաստերը բազմաթիվ են¹⁴: Այդ մասին անուղղակիորեն հայտարարեց նաև ՀՀ

¹⁴ ՀՄԻԿ դիտորդական առաքելության ընթացքում բացահայտվել են 1995թ. հուլիսի 05-ի հանրաքվեի արդյունքների կեղծման բազմաթիվ փաստեր, որոնք ներկայացվել են ՀՀ դատախազություն, սակայն վերջինիս կողմից ընթացք չեն տրվել: Տողերիս հեղինակը համակարգել է դիտորդական առաքելությունը հանրապետության մոտ հարյուր տեղամասերում, միաժամանակ, անձամբ դիտորդելով Վանաձոր քաղաքի կենտրոնում տեղակայված գորամասում, որտեղ քվեարկողների մոտ 95%-ը «ոչ» էր ասել սահմանադրության նախագծին:

2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի կեղծման վերաբերյալ կան ավելի քան 2000 դիտորդների հաղորդագրություններ, լրատվամիջոցների ընդարձակ դիտարկումներ: Տես նաև. <http://civilnet.am/2014/10/20/voices-tatul-hakobyan-constitutional-re/#.VW-8Ys-qqko>; <http://armlur.am/14502/>; <http://www.aravot.am/2005/12/07/322647/>

2015թ. սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի կեղծման վերաբերյալ, տես՝ «2015 թվականի հանրաքվեի չարաշահումների փաստագրում» վերնագրով «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի Զեկույցը <https://www.aniarc.am/2015/10/08/transparency-international-report-constitutional-reforms/>, <http://prwb.am/wp-content/uploads/2017/02/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-2015-%D4%B9%D5%8E%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%D4%BB->

վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սահմանադրության օրվա կապակցությամբ 2020թ. հուլիսի 05-ին արտասանած իր ուղերձում. «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության մեջ երեք անգամ պաշտոնապես արձանագրվել է, որ ժողովուրդը հանրաքվեով ընդունել է Սահմանադրություն, կամ սահմանադրական փոփոխություններ: Բայց այդ հանրաքվեներից ոչ մեկի արդյունքները վստահելի չեն համարվել հանրության կողմից: Հայաստանի քաղաքացիները իրենցը չեն համարել Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու որոշումը, իրենցը չեն համարել նաև այդ որոշումների արդյունքում ընդունված Սահմանադրությունը¹⁵»: Այնուհետև, վարչապետն ավելացնում է, որ ինքը եկել է այն «եզրակացության, որ *մեր երկրին հարկավոր է նոր սահմանադրություն*, որը քաղաքացիների կամքի վրա հենված, քաղաքացիների կամքից բխող պետական կարգ կհաստատի Հայաստանում¹⁶» (ընդգծումը մերն է՝ Գ.Մ.):

[%D5%80%D4%B1%D5%86%D5%90%D4%B1%D5%94%D5%8E%D4%B5%D4%BB-%D5%89%D4%B1%D5%90%D4%B1%D5%87%D4%B1%D5%80%D5%88%D5%92%D5%84%D5%86%D4%B5%D5%90%D4%BB-%D5%93%D4%B1%D5%8D%D5%8F%D4%B1%D4%B3%D5%90%D5%88%D5%92%D5%84.pdf](#)

¹⁵ «Հայկական ժամանակ» թերթ, 2020թ. հուլիսի 05

¹⁶ Նույն տեղում: Ակնհայտ է, որ վարչապետի սույն հայտարարությունը, ներկա պահին հակասության մեջ է իր 2020թ. փետրվարի 12-ի որոշմամբ հաստատված «Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատակարգի» հետ, որի 8-րդ կետով հանձնաժողովի առաջ խնդիր է դրված մշակել «Սահմանադրության փոփոխությունների նախագիծ»: Ենթադրելի է, որ այս ընթացքում, պատկան ատյաններում պատրաստվում են վարչապետի հայտարարությունից բխող համապատասխան փոփոխություններ:

Եվ վերջապես, Սահմանադրության ընդունմանը և հետագա բարեփոխումներին նախորդած համաժողովրդական քննարկումները հիմնականում եղել են ձևական: Յուրաքանչյուր համապատասխան ժամանակաշրջանի իշխանության համար այդ «քննարկումները» ծառայել են որպես ժողովրդավարության տպավորություն ստեղծելու միջոց, շղարշ: Ամենախոսուն օրինակը 1995թ. հուլիսի 05-ի հանրաքվեին նախորդած և մոտ երկու տարի շարունակված «քննարկումներն» էին¹⁷: Անհավատալի իրողություն է, որ այդ «քննարկումների» արդյունքում իշխանության հրամցրած նախագծում ոչ մի հոդված, ոչ մի բառ չի փոխվել, այն այդպես էլ դրվել է հանրաքվեի և «ընդունվել» կեղծիքով:

Կա տեսակետ, թե Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներն անփոփոխելի են: Սակայն համաձայն գործող Սահմանադրության հոդված 202-ի առաջին մասի, այդ հոդվածները, մի շարք, թվարկված այլ հոդվածների հետ միասին կարող են փոփոխվել «միայն հանրաքվեի միջոցով»: Հայաստանի Հանրապետությունում անփոփոխելի են միայն Անկախության Հռչակագիրը և Սահմանադրական դատարանի որոշումները:

Գործող Սահմանադրության մեջ չորս անգամ կատարված փոփոխությունները ծավալով արդեն իսկ գերազանցում են փաստաթղթի սկզբնական տեքստին և

¹⁷ Պաշտոնական և իշխանամետ մամուլն ամեն կերպ գովերգում էր նախագիծը: «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի յուրաքանչյուր համարի առաջին էջում կարելի էր տեսնել ճանաչված մտավորականների՝ գրողների, երգահանների, նկարիչների, դերասանների ժպտերես լուսանկարներն ու կարդալ նրանց «այո»-ի ուղղորդված հորդորները: Միննույն ժամանակ, կատարվող առաջարկները մնում էին անարձագանք և անտեսվում էին:

այդ իմաստով, տեխնիկայես նույնպես նպատակահարմար է նոր սահմանադրություն ընդունելը:

Այսպիսով, հարկ է ազատվել երկրի հիմնական օրենքի կեղծված լինելու անպատվաբեր ժառանգությունից և մշակել նոր, իրավական գործուն համակարգ ապահովող, հայ ժողովրդին, Հայաստանի քաղաքացուն արժանավայել սահմանադրություն, որն ազատ, ժողովրդավարական ընթացակարգով ու քննարկումներով և ազատ ու արդար կազմակերպված հանրաքվեով ընդունվելով՝ իր պատվավոր տեղը կգրադեցնի հայկական իրավունքի աղբյուրների շարքում:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Պետության և իրավունքի համաշխարհային պատմությունը վկայում է, որ պետական կառավարման վարչակարգը չի պայմանավորվում պետության կառավարման ձևով: Հայտնի են ժողովրդավար, ազատ միապետություններ (Մեծ Բրիտանիա, Դանիա, Իսպանիա, Նորվեգիա, Շվեդիա) և անազատ ճանաչված հանրապետություններ (Ռուսաստան, Ղազախստան, Հյուսիսային Կորեա, Թուրքիա և այլն)¹⁸: Հետևաբար, էականը արդարության պահանջներին համապատասխանող իրավական համակարգը, իրավունքի տիրապետության (Rule of Law) ապահովումը, կառավարման գործառույթների իրական տարանջատումը և դրա ճյուղերի ներդաշնակ փոխհարաբերությունների կառուցումը,

¹⁸ Տես՝ «Ֆրիդոմ Հաուզ» իրավապաշտպան կազմակերպության դասակարգումը՝ <https://freedomhouse.org/explore-the-map?type=fw&year=2020>

դատարանների իրական անկախությունը և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգի ձևավորումն է:

Ստորև ներկայացվում են Հայաստանում պետական կառավարման և ինքնակառավարման մարմինների արդյունավետ համակարգի ձևավորման սահմանադրական, հայեցակարգային հիմնադրույթները:

4.1. ՀՈԳԵՎՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

*Քննեցե՛ք ձեր սիրտը եւ նայեցեք, թէ կա՞^օ
արդե՞ռք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա
մեր այդ հոգևոր Հայաստանը. եթե չկա, ապա զուր են
ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար...»¹⁹:*

Վահան Տերյան

Ավելի քան հարյուր տարի առաջ գրված մեծ բանաստեղծի, քաղաքական գործչի այս միտքն այսօր էլ արդիական ու ճշմարիտ է: ՀՀ Սահմանադրական դատարանի և Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր խորհրդի նախկին անդամ, երջանկահիշատակ Ռաֆայել Պապայանն իր «*Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները*» ծավալուն աշխատության մեջ հանգամանալից վերլուծել է իրավական, պետա – իրավական և բարոյական հասկացությունների՝ Աստվածատուր ճշմարտությունների հետ ունեցած օբյեկտիվ առնչությունները: Պատմական անդրադարձերով նա ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում «...անգամ ամենահակամարդկային ու

¹⁹ Վահան Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հատ. 3, Երևան, 1975, էջ՝ 116-117:

հակաիրավական կարգերի օրոք պահպանվել են Աստվածային ծագում ունեցող հատիկները թեկուզ որոշ չափով կամ զգալիորեն շեղված տեսքով...²⁰» Նա մեջբերում է վաղ քրիստոնեության նշանավոր աստվածաբան Տերտելիանոսին, ով «ուղղակիորեն էր շեշտում, որ Աստված է իրավունքի աղբյուրը»²¹ և ցույց տալիս, որ հակառակ «իրավունքի և աստվածային ճշմարտության ներկայացուցիչների հարաբերակցության ընկալումի» ամենատարբեր դրսևորումներին, «իրավունքի հոգևոր հիմքը»²² եղել է որպես ուղենիշ «մարդկության մտքի այնպիսի կարկառուն ներկայացուցիչների հայեցակարգում, որպիսիք են Թ. Հոբսբ, Ջ. Լոքը, Շ. Մոնտեսքյուն, Ի. Կանտը, Գ. Հեգելը և այլոք»²³:

Ակնհայտ է, որ ժամանակակից նյութական աշխարհի սրընթաց զարգացման համեմատ խիստ անհամաչափ է հոգևոր ոլորտի ընթացքը: Գիտնականներն ահազանգում են գիտության բոլոր ոլորտներում, և մասնավորապես, իրավունքի ոլորտում այդպիսի անհամաչափ ընթացքի վտանգավորության մասին: Մոսկվացի ճանաչված փաստաբան Պյոտր Բարենբոյմը գրում է, որ ռուսական ԲՈՒՀ-երում Աստվածաշնչյան տեքստերի ուսումնասիրությունների դադարեցումը, իրավաբանական ԲՈՒՀ-երի ծրագրերում աստվածաշնչական սահմանադրա – իրավական թեմատիկայի բացակայությունը «կործանարար է ներգործում նոր սերնդի

²⁰ «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» Ռաֆայել Պապայան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2002, էջ 17

²¹ Նույն տեղում, էջ 20

²² Նույն տեղում, էջ 22-23

²³ Նույն տեղում, էջ 22

սահմանադրա – իրավական մտածելակերպի վրա»²⁴: Իր մեկ այլ աշխատության մեջ նա գրում է. «Առանց կրոնի և բարոյականության, ինչպես մեզ սովորեցնում է Մաքիավելլին, անհնար է երկարատև պահպանել ոչ ժողովրդավարությունը, ոչ բուն պետությունը ցանկացած ձևով, և առավել ևս, չի կարելի լիարժեք քաղաքացիական հասարակություն ստեղծել»²⁵:

ՀՀ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր Ա.Ղամբարյանը և դոցենտ Թ. Շաքարյանը համահեղինակել են «*Ղոկտրինալ հայեցակարգ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակի բարեփոխումների*» աշխատանքը: Հեղինակներն ազգային և միջազգային պատմական անդրադարձերով ուսում-նասիրելով հարցը, եկել են մի շարք ուշագրավ եզրահանգումների: Մասնավորապես, քննելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՀԱՍԵ) ներկա սահմանադրական, իրավական կարգավիճակը ըստ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքների՝ եկել են հետևյալ անհերքելի եզրահանգմանը. «Հակապատմական պետք է համարել

²⁴ Петр Баренбойм, «Первая конституция мира, Библейские корни независимости суда», Москва 1997, стр.36

²⁵ Петр Баренбойм, “3000 лет доктрины разделения властей. Суд Сьютера” Москва 2003, стр. 86

երկու հազարամյակ գործող և ազգային համարվող կառույցին սոսկ դասական կրոնական կազմակերպության կարգավիճակ տալը և նրա իրավասուբյեկտությունը մասնավոր իրավական ռեժիմներով սահմանված գործունեւրից կախվածության մեջ դնելը²⁶։ Հեղինակները գտնում են, որ «Սահմանադրությամբ անհրաժեշտ է հատակեցնել ՀԱՍԵ իրավաբանական կարգավիճակի հիմունքները՝ այն ճանաչելով որպէս հանրային իրավունքի իրավաբանական անձ (սահմանադրորեն ամրագրել նրա օբյեկտիվորեն գոյություն ունեցող կարգավիճակը)²⁷։ Հայեցակարգի մեկ այլ բաժնում հեղինակները հիմնավորում են իրենց առաջարկը. Ազգային Եկեղեցու հանրային իրավական կարգավիճակը պատմականորեն ձևավորված և օբյեկտիվորեն գոյություն ունեցող ճանաչված փաստ է, որը պարզապէս պետք է ժամանակակից իրավաբանական եզրութաբանությամբ ամրագրել բարձրագոյն իշխանության (սահմանադրի) կողմից ընդունված ակտում (Սահմանադրությունում)²⁸։

Հեղինակները նաև համեմատական վերլուծություն են կատարել, ուսումնասիրելով աշխարհի բազմաթիվ այդ թվում՝ եվրոպական զարգացած երկրներում ճանաչված ազգային եկեղեցիների և պետական կառույցների փոխհարաբերությունները և հիմնավորել, որ ՀԱՍԵ գործող Սահմանադրությամբ տրված բացառիկ կարգավիճակը որևէ իրավական խնդիր չի կարող

²⁶ «Դոկտրինալ հայեցակարգ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակի բարեփոխումների», էջ 6, 11:

²⁷ Նույն տեղում, էջ 6

²⁸ Նույն տեղում, - էջ 17-18:

հարուցել Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների համար²⁹:

ՀՀ նոր սահմանադրության մեջ հոգևոր քրիստոնեական արժեհամակարգի ամրագրման հրամայականը պայմանավորվում է նաև հայ ժողովրդի կյանքում հետևյալ պատմական և ներկա բացառիկ իրողություններով.

- Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն աշխարհում առաջինը, Տրդատ Գ Մեծի (250-330) արքայական հրովարտակով, 301թ. ընդունվելու հանգամանքով:
- Հայոց պետականության գոյության երկարատև ընդհատումների ընթացքում ամենայն հայոց կաթողիկոսների հայ ժողովրդին ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ կյանքում փաստացի առաջնորդելու և որպես այդպիսին օտար նվաճողների՝ պարսից շահերի, արաբ խալիֆների, թուրք սուլթանների և ռուս ցարերի կողմից ճանաչվելու հանգամանքով:
- ՀԱՍԵ թողած հոգևոր – մշակութային վիթխարի ժառանգությամբ սկսած Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետին հայոց գրերի հայտնությունից մինչև Սուրբ Գրիգոր Նարեկացու, Սուրբ Ներսես Շնորհալու, Սուրբ Գրիգոր Տաթևացու, Կոմիտաս վարդապետի և մյուս բազում Հայրերի գործերով:
- Հայ ժողովրդի կյանքի հատկապես ճակատագրական պահերին (Ավարայր, Սարդարապատ, Արցախյան 1990-ականների և 2020-ի ազատամարտեր) ՀԱՍԵ և Ամենայն Հայոց կաթողիկոսների,

²⁹ Նույն տեղում, էջ 21

թեմական առաջնորդների, հոգևոր դասի ունեցած դերակատարումներով ճակատում և թիկունքում:

- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ դերը հաճախ ընդգծվում է անկախ փորձագիտական տարբեր զեկույցներում³⁰:

2019թ. մայիսին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած Մայր Աթոռի և Կառավարության հարաբերություններին առնչվող հարցերով Աշխատանքային խմբի հանդիպմանը վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է. «...ինձ համար շատ կարևոր է Հայաստանի Հանրապետությունում քրիստոնեական արժեքների արմատավորումը: Եվ ես կհամարձակվեմ ասել, որ Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա հեղափոխությունը մեծ մասով հիմնված էր հենց քրիստոնեական արժեքների վրա³¹:»

Ամիսներ անց, այս անգամ, Մայր Աթոռում հանդիպելով Գերագույն Հոգևոր խորհրդին, վարչապետը կարևորելով «երկրում հոգևոր կյանքը, հոգևոր արժեքները» և հոգևոր մթնոլորտը, ընդգծել է, որ երկրում տեղ գտած «ապահովողականացման ֆոնին է, որ տեղի են ունենում քաղաքական դեգրադացիաներ և տեղի է ունենում կոռուպցիայի ծավալում»³²:

Առաջարկվում է.

1. Ընդունել Ղամբարյանի և Շաքարյանի առաջարկը և ՀՀ նոր Սահմանադրությամբ Հայաստանյայց Առաքելական

³⁰ Տես, օրինակ՝ Մարդկային զարգացման ազգային զեկույց «Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր, 2001թ., էջ՝ 31

³¹ «Կրթություն» շաբաթաթերթ, 2019թ. մայիսի 08, թիվ 22-23

³² <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/11/01/Nikol-Pashinyan-meeting/>

Սուրբ Եկեղեցին ճանաչել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

2. Գործող, 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 18.1 հոդվածով նախատեսված ձևակերպումը խմբագրել հետևյալ կերպ. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի և որպես ազգային եկեղեցու՝ բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարգավորող օրենքով կարգավորվում են ՀԱՍԵ բարեփոխումների, Ամենայն Հայոց կաթողիկոսի և Ազգային եկեղեցական ժողովի հոգևոր և աշխարհական պատգամավորների ընտրությունների և դրանց գործունեության թափանցիկության և հայ ժողովրդի՝ որպես ընդհանրական եկեղեցու, առաջ հաշվետու լինելու ընթացակարգեր»:

3. Սահմանադրորեն արգելել կաթողիկոսական ընտրություններին պետական մարմինների որևէ միջամտություն կամ ներգործություն, այդպիսի արարքը ճանաչելով որպես հայ ժողովրդի և նրա ազգային և հոգևոր անվտանգության դեմ ուղղված ծանր հանցագործություն:

4. Նախատեսել դրույթ, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին համագործակցում են հանրային կյանքի տարբեր ոլորտներում ի շահ հայ ժողովրդի զարգացման,

հայոց պետականության հզորացման և Հայաստանի քաղաքացիների հոգևոր կրթության և դաստիարակության:
5. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ազատել բոլոր հարկերից:

4. 2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

4. 2. 1. Եզրույթի և դրա բովանդակության պատմական զարգացումը

Իրավունքի տիրապետության (Rule of Law) եզրույթի բովանդակությունը ձևավորվել է դարերի պատմական զարգացման ընթացքում: 12-13-րդ դարերում եվրոպական համալսարաններում իրավունքի գաղափարի ուսումնասիրությունները վերսկսվել էին կրկին Հռոմեական իրավունքի հիմքի վրա, սակայն, արդեն հանրային իշխանության տիրույթի ընդգրկումով: Արդարության հայեցակարգը հավակնում էր տարածվել իշխանություն - հասարակություն, կառավարողներ - կառավարվողներ հարաբերությունների վրա:

Այդ շրջանի Կիլիկյան Հայաստանում Ամենայն Հայոց կաթողիկոս Սուրբ Ներսես Շնորհալին (1100-1173) իր «Թուղթ ընդհանրական» հայրապետական կոնդակով վարքագծի կանոններ է սահմանել ոչ միայն քաղաքացիների, երկրագործների, հոգևորականների ու զինվորականների, այլ նաև՝ իշխանների համար, հորդորելով նրանց՝ «անիրաւութեամբ մի վարուէք հպատակների հետ... այլ իւրաքանչիւրին օրէնքով եւ ըստ իր կարողութեան չափի դատեք»³³: Հատկանշական է

³³ Ս. Ներսես Շնորհալի, «Թուղթ Ընդհանրական», «Գանձասար» հանդես, 1991, էջ 103

փաստաթղթի վերնագիրը, որը գրաբարից թարգմանաբար նշանակում է՝ «Նամակ բոլորին», ամենքին: Ըստ էության, Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական կոնդակով փորձել է կարգավորել ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրային իրավունքի հարաբերությունները: Եթե նկատի ունենանք ամենայն հայոց կաթողիկոսների բարձր հեղինակությունը հասարակության շրջանում և բացառիկ դերակատարումը երկրի կառավարման ոլորտում³⁴, ապա կարելի է համարել, որ «Թուղթ ընդհանրականը» Կիլիկյան Հայաստանում գործադրվելով կարգավորել է իշխանական, հանրային հարաբերությունները:

Եվրոպայում արդարության հայեցակարգի ընդլայնումը տեղի ունեցավ Բնական իրավունքի դպրոցի հաղթանակով և 18-րդ դարում ձևավորվեց *քաղաքականությունից վեր դասվող հանրային իրավունքը*, որը սկսեց արդեն գործնականում կարգավորել մինչ այդ տաբու համարվող կառավարողների ու կառավարվողների միջև հարաբերությունները³⁵:

18-րդ դարավերջի աշխարհի արևելքի, արևմուտքի և Հյուսիսային Ամերիկայում նոր ձևավորվող ԱՄՆ-ի պետության իրավական համակարգերին ու դրանց զարգացումներին քաջաձանոթ լինելով³⁶, Շահամիր Շահամիրյանն իր «Որոգայթ փառաց» «Հայոց

³⁴ Դոկտրինալ հայեցակարգ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակի բարեփոխումների, հեղինակներ՝ Ի. գ. դ. պրոֆ. Ա. Ղամբարյան, Ի. գ. թ. դոցենտ Թ. Շաքարյան, էջ 15

³⁵ «Major legal systems in the world today: An introduction to the comparative study of Law», by Rene David and John E.C. Brierley, London, 1985, p. 81

³⁶ «Որոգայթ փառաց», Երևան, «Հայաստան» 2002, էջ 39-50, 269-272

Կանոնադրության» (Սահմանադրության) մեջ ըստ էության, զարգացրել է քաղաքականությունից վեր դասվող իրավունքի տիրապետության գաղափարը. «...ինչ կանոն և օրենք որ ընդունելի կլինի և կհաստատվի հայոց մեջ, նույն կանոնն էլ թող Հայաստան աշխարհում հայոց թագավոր լինի³⁷»: Բազմաթիվ դրույթներում նա ընգծում է իրավունքի, օրենքի արժևորությունը. «...ամեն գործի մեջ անխախտելի օրենքն ու սահմանն ավելի արժեքավոր են, քան թանկագին գոհարեղենը³⁸: Ներկայացնելով իր առաջարկած *«ընդհանուրի թագավորության առանձնահատկությունները»* և դիմելով հայ ժողովրդին, նա ասում է՝ «...ձեր բանական հոգու զորությամբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության համաձայն, ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի *ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի օրենքներից»*³⁹(ընդգծումը մերն է. Գ. Մ.):

³⁷ «Որոգայթ փառաց», Երևան, «Հայաստան» 2002, էջ 28

³⁸ Նույն տեղում, էջ 36

³⁹ Նույն տեղում, էջ 14

4. 2. 2. Եզրույթի ժամանակակից ընկալումը

Եզրույթի բովանդակության և ընկալումների շուրջ գիտական տարակարծությունները 21-րդ դարասկզբին փոխադրվեցին գործնական կիրառության դաշտ: Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Խորհրդարանական վեհաժողովը 2007թ. ընդունած թիվ 1594 բանաձևում⁴⁰ արձանագրել է, որ գոյություն ունի եզրույթի շփոթ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներում, ինչպես նաև արևելաեվրոպական ընկալումներում: Հայերենում Rule of Law եզրույթը կիրառվում է տարբեր ձևակերպումներով՝ իրավունքի գերակայություն, իրավունքի իշխանություն, օրենքի գերակայություն, օրենքի իշխանություն: Երբեմն, կիրառվում է նաև՝ «իրավունքի տիրապետություն»⁴¹ տարբերակը: Այսպիսի իրավիճակը վկայում է Հայաստանում նույնպես հասկացության բովանդակության ոչ միասնական ընկալման, անորոշության մասին:

ԵԽ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնախումբը» (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) 2011թ. մարտի 25-26-ի «Իրավունքի տիրապետության» թեմայով զեկույցում⁴² հանգամանակից հետազոտելով հասկացության պատմականորեն զարգացման ընթացքը և տարբեր երկրներում իրավական տարբեր մոտեցումները, եկել է այն եզրակացության, որ հնարավոր

⁴⁰ “The principle of the Rule of Law”, Parliamentary Assembly of the Council of Europe, Resolution 1594 (2007)

⁴¹ Գ. Գ. Մանուկյան, Մարդու իրավունքների հասկացությունը, Վանաձոր – 2000, էջ 23, «Էջմիածին» ամսագիր, հուլիս 2018, էջ 119:

⁴² Report on the Rule of Law, Adopted by the Venice Commission at its 86th plenary session (Venice, 25-26 March 2011), point 41

է համընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) կայացում հասկացության բովանդակությունը կազմող հետևյալ վեց տարրերի շուրջ.

- (1) օրինականություն, ներառյալ՝ թափանցիկ, հաշվետու և ժողովրդավար օրինաստեղծ գործընթացը, (2) իրավական որոշակիություն (3) կամայականության արգելք (4) անկախ և անկողմնակալ դատարանների առջև արդարադատություն, ներառյալ՝ վարչական ակտերի դատական վերանայման հասանելիություն, (5) մարդու իրավունքների հարգանք (6) օրենքի առաջ հավասարություն և անխտրականություն⁴³:

Առաջարկում ենք, այս վեց տարրերին ավելացնել յոթերորդը՝ *իրավունքի գերակայությունը քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ*, որով կամբողջանա եզրույթի բովանդակությունը: Այս դրույթը, որը իրավագիտության կողմից, ինչպես վերը հիշատակվեց, ընդունվել է դեռևս 18-րդ դարում, առանձնակի կարևորություն ունի հատկապես այն երկրների համար, որտեղ, ավանդաբար, քաղաքականությունն է օրենսդրորեն գերակայել իրավունքի նկատմամբ: Նախկին խորհրդային երկրներում իրավահարաբերությունները պայմանավորվում էին ոչ թե արդարության հայեցակարգով, այլ՝ կոմունիզմի քաղաքական գաղափարներով⁴⁴: Յոթերորդ տարրի հավելումը Վենետիկի հանձնաժողովի առաջարկած վեց տարրերին, ամբող-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ «Основные правовые системы современности» Рене Давид, Москва 1988, стр. 243,

ՀԽՍՀ 1978թ. ապրիլի 14-ի Սահմանադրություն, հոդված 6:

ջացնելով եզրույթի բովանդակությունը, հընթացս օգնում է հայերենում Rule of Law եզրույթի ճիշտ ձևակերպմանը, որպես՝ *իրավունքի տիրապետություն*⁴⁵: Եվ ահա թե ինչու:

Երբ խոսում ենք, օրինակ, իրավունքի գերակայության կամ իշխանության մասին՝ առանց որոշակիացնելու այդ գերակայության կամ իշխանության օբյեկտը, ապա հասկացության բովանդակությունը մնում է թերի: Գերակայության, իշխանության կամ տիրապետության *օբյեկտի* որոշակիացնելը դյուրացնում է եզրույթի ճիշտ ձևակերպումը: Քաղաքական գաղափարախոսությունները քաղաքական կուսակցությունների, կառավարությունների հետ միասին ենթակա են շարունակական, կանխատեսելի կամ անկանխատեսելի փոփոխությունների: Մինչդեռ, իրավունքը պետք է լինի առավելագույնս անփոփոխ, հարաբերականորեն կայուն, ինչի կարևորությունը ակնհայտ է հատկապես քաղաքական ճգնաժամերի ժամանակահատվածներում: Օրենքները կարող են փոփոխվել ու փոփոխվում են: Սակայն իրավունքը չի կարող և չպիտի փոփոխվի նույնիսկ օրենսդրի կողմից: Այն պետք է տիրապետող, իշխող ու գերակայող լինի քաղաքականության և քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ:

Շահամիրյանը «Հայոց Կարգադրության օրենքի» (Սահմանադրության) 16-րդ գլխում գրում է՝ «օրենքներն են նրանց վրա հովիվ»⁴⁶: Ռոմանո - գերմանական իրավական ընտանիքի երկրներում ավանդաբար, իրավունքը

⁴⁵ Բառացի՝ Reign of Law.

⁴⁶ «Որոգայթ փառաց», Երևան, «Հայաստան» 2002, էջ 79

քաղաքականությունից վեր է դասվել⁴⁷: Եվ արևմուտքի իրավագետները կիրառում են Reign of Law⁴⁸ (իրավունքի թագավորություն, տիրապետություն) արտահայտությունը, որը տարբեր է «Primacy of Law» (իրավունքի գերակայություն)-ից: Ռուսերենում՝ նույնպես, կիրառվում է՝ ոչ թե верховенство права, այլ՝ господство права⁴⁹: Հետևաբար, և՛ որպես իրավական հասկացություն, կատեգորիա, և՛ որպես եզրույթ հայերենում Rule of Law-ի ճիշտ ձևակերպումն է՝ *իրավունքի տիրապետությունը*:

⁴⁷ «Major legal systems in the world today: An introduction to the comparative study of Law», by Rene David and John E.C. Brierley, London, 1985, p. 128

⁴⁸ «Major legal systems in the world today: An introduction to the comparative study of Law», by Rene David and John E.C. Brierley, London, 1985, p. 49, 108; «The Reign of Law: Marbury V. Madison and Constitution of America»

⁴⁹ Верховенство права: современные варианты терминологии; Чиркин Вениамин Евгеньевич, доктор юридических наук, профессор, Журнал российского права № 12 — 2015 стр. 5-11, «Основные правовые системы современности» Рене Давид, Москва 1988, стр.188; Глобализация Господства Права: влияние на Россию и страны европейского союза С. Ю. Кашкин, П. А. Калиниченко Век глобализации 1/2008 98–108.

4. 3. ՆՈՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

«...գտնել միության այնպիսի ձև, որն ընդհանուրի ամբողջ ուժով պաշտպանում և պահպանում է միության անդամներից յուրաքանչյուրին ու նրա ունեցվածքը, և որի շնորհիվ յուրաքանչյուրը, միավորվելով բոլորի հետ, ենթարկվում է, սակայն միայն ինքն իրեն, և մնում է նույնքան ազատ, որքան նախկինում էր: Այս է այն հիմնական խնդիրը, որը լուծում է Հասարակական դաշինքը⁵⁰»:

Ժան Ժակ Ռուսո

Նկատի ունենալով 21-րդ դարում եվրոպական և հյուսիս - ամերիկյան առաջատար, ժողովրդավար երկրներում առկա հարաճուն զանգվածային դժգոհությունները, երբեմն – երբեմն բռնկվող հանրային հուզումներն ու ոստիկանական ուժերի հետ բախումները, դժվար կլինի պնդել, թե Ժան Ժակ Ռուսոյից որպես բնաբան ընտրված տողերի իմաստով ժամանակակից աշխարհում ունենք որևէ հասարակական (հանրային) համաձայնության պետություն, իրական հանրային դաշինք: Հետևաբար, հանրային դաշինքը շարունակում է մնալ որպես մարդկության բաղձալի հեռանկար:

Առաջարկվում է՝ այդ բաղձալի հեռանկարին հասնելու համար գիտական, փորձագիտական վերլուծությունների հիման վրա սահմանադրորեն սահմանել.

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգերում հանրային կարիք-

⁵⁰ «Հասարակական դաշինքի մասին կամ քաղաքական իրավունքի սկզբունքները», Ժան-Ժակ Ռուսո, գիրք առաջին, Երևան 2014, էջ 23-24

ների համար անհրաժեշտ *պետական բյուջեով պահվող կառույցների* (ՊԲՊԿ) սպառիչ ցանկը:

2. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգերում *պետական բյուջեից վարձատրվող անձանց*⁵¹ (ՊԲՎԱ) ողջամիտ, հիմնավորված սահմանաքանակները:

Առաջարկվող լուծման գաղափարական, ելակետային հիմնադրույթները հետևյալն են.

Ժողովուրդը, մարդկային հանրույթը, համայնքը (այսուհետ՝ համայնք) բնութով ինքնակառավարվող է: Որքան մեծ է պետական (արտաքին) միջամտությունը համայնքի կյանքին, այնքան անարդյունավետ է համայնքի կառավարումը և համապատասխանաբար, ցածր՝ բնակչության բարեկեցությունը: Երբ որոշակի հանրային աշխատանքի անհրաժեշտություն է ծագում, ապա՝ համայնքը (ԳՈՐԾԱՏՈՒՆ) այդ նպատակով համայնքի անդամներից ՎԱՐՁՈՒՄ է տվյալ աշխատանքի համար անհրաժեշտ թվաքանակով անձանց, նրանց տալիս հստակ հանձնարարություններ, դա ձևակերպում պայմանագրով և վճարում կատարած աշխատանքի դիմաց: ԳՈՐԾԱՏՈՒՆ, ում ՀՀ գործող Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն պատկանում է ամբողջ իշխանությունը, այդ իշխանությունը չի զիջում ԿԱՏԱՐՈՂԻՆ, այլ միայն հանձնարարություն է տալիս և վերահսկում նրա կողմից աշխատանքի կատարումը: Եթե ԿԱՏԱՐՈՂԸ ձախողում է

⁵¹ Իմա՝ բարձրաստիճան պաշտոնատար, քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք:

առաջադրանքի կատարումը, վարձակալության պայմանագիրը պարզապես խզվում է:

ԳՈՐԾԱՏՈՒ - ԿԱՏԱՐՈՂ հարաբերության այս քանաձևում ԳՈՐԾԱՏՈՒՆ՝ ամբողջ ժողովուրդն է, ազգաբնակչությունը, իսկ ԿԱՏԱՐՈՂԸ՝ ժամանակակից ընկալումներով և ըստ գործող օրենքների⁵²՝ կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմիններն են, հանձինս բարձրաստիճան պաշտոնատար, քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց:

Սահմանադրորեն ՊԲՊԿ և ՊԲՎԱ սպառիչ ցանկերը և սահմանաքանակները սահմանելուց հետո դրանցում որևէ փոփոխություն պետք է թույլատրվի միայն օրենքով՝ հանրային պարտադիր քննարկումներից հետո միայն, կամ, հատկապես ՏԻՄ-երում՝ հանրաքվեով: Դա հիմնավորվում է այն պարզ տրամաբանությամբ, որ իշխանության կրողը՝ քաղաքացին, ինքը պետք է թույլատրի իր ծախսերի ավելացում, նոր մարմնի, կառույցի, նոր «պաշտոնյա - կատարողի» հաստիքի ավելացում:

Մասնավոր իրավունքի ոլորտում, որևէ ողջամիտ ԳՈՐԾԱՏՈՒԻ տեսլականում անգամ չեն կարող տեղավորվել ժամանակակից աշխարհում հիշյալ երկու սուբյեկտների միջև փոխհարաբերությունները և իրավիճակը, որ առկա են հանրային իրավունքի ոլորտում, ուր ԿԱՏԱՐՈՂԸ ՅՈՒՐԱՅՐԵԼ է իշխանությունը, բառի

⁵² ՀՀ օրենքը Պետական կառավարման համակարգի մարմինների մասին, ՀՀ օրենքը Հանրային ծառայության մասին, ՀՀ օրենքը Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին, ՀՀ օրենքը Պետական կառավարման համակարգի մարմինների մասին:

իսկական իմաստով՝ հպատակեցնելով ԳՈՐԾԱՏՈՒՆ, նրան թողնելով թղթի վրա, Սահմանադրության համապատասխան հոդվածը միայն⁵³: Պատահական չէ, որ առնվազն հայերենում և ռուսերենում այդպիսի իրավիճակն իր անթաքույց արտացոլումն է գտել նաև ընդունված եզրութաբանության մեջ: Որպես «քաղաքացիություն» եզրույթի հոմանիշ, հայերենում կիրառվում է նաև «*հպատակություն*» տարբերակը, իսկ ռուսերենում՝ «гражданство» եզրույթին որպես հոմանիշ կիրառվում է «подданство»: Զավեշտալի է, որ de jure իշխանությունը կրող, սակայն de facto այն կորցրած ԳՈՐԾԱՏՈՒՆ, կորցնելով ԿԱՏԱՐՈՂ «ԻՇԽԱՆԱՎՈՐԻ» վրա ներգործելու բոլոր միջոցները, ստիպված է լինում հանրահավաքային, փողոցային պայքար մղել ԿԱՏԱՐՈՂԻՆ «կարգի հրավիրելու» համար, իսկ վերջինս էլ նրա նկատմամբ «օրինականացված» ֆիզիկական ուժ, «հատուկ միջոցներ» է կիրառում իրավապահների միջոցով, որոնց նույնպես ԳՈՐԾԱՏՈՒՆ է վճարում⁵⁴, քանզի չի կարող չվճարել այնպես, ինչպես *հպատակը* չի կարող հակադրվել նրան ում ինքը «պատկանում» է, հ՝պատակ է: Այսպիսի իրավիճակը լիովին համապատասխանում է առակին Աստվածաշնչյան խաղողի այգու Տիրոջ և անօրեն վարձակալների մասին⁵⁵, ովքեր իրենց օրինական հասանելիքը պահանջող Տիրոջ

⁵³ ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), հոդված 2. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

⁵⁴ 2018թ. թավշյա հեղափոխության ժամանակ վանկարկված որոշ կարգախոսներ՝ «Ոստիկանը մերն է», «Մենք ենք տերը մեր երկրի» և այլն լիովին համահունչ են մտքերի այս ընթացքին:

⁵⁵ Մտթ.21:33-41, Մարկ. 12:1-12

սպասավորներին և նույնիսկ Որդուն անարգելով, ծեծելով ու սպանելով փորձում էին սեփականել իրենց չպատկանող ԱՅԳԻՆ:

Առաջարկվում է. միջին դարերից սկսված գործընթացն ավարտել՝ մասնավոր իրավունքի ոլորտի de jure և de facto բնականոն իրավահարաբերությունները համամասնաբար փոխադրելով հանրային իրավունքի ոլորտ.

1. de facto վերականգնելով ժողովրդի ի սկզբանե ունեցած լիիշխանությունը և օրինական իրավունքները,
2. պետական մարմինների և ՏԻՄ համակարգերում վերացնելով հինգերորդ անիվի «գործառույթ» ունեցող բոլոր կառույցները, այդպիսով դադարեցնելով հսկայական միջոցների վատնումները⁵⁶,
3. անարդյունավետ գործառույթներով զբաղված հազարավոր, տասնյակ հազարավոր⁵⁷ պաշտոնյաների ներգրավելով արդյունավետ և ստեղծարար գործունեության մեջ⁵⁸:

⁵⁶ «Հինգերորդ անիվի» ակնառու օրինակ են մարգպետարանները Հայաստանում:

⁵⁷ Իսկ շատ երկրներում՝ միլիոնավոր:

⁵⁸ Խնայված, կամ, ավելի ճիշտ՝ այլևս չվատնվող հսկայական միջոցներից նախկինում պետական բյուջեից վարձատրվող քաղաքացիներին պետք է տրվեն անհրաժեշտ հատուցումներ և վճարվեն հնարավոր վերաորակավորման կամ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու ծախսերը:

4. 4. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ

4. 4. 1. Պատմական համառոտ ակնարկ

Ըստ էության, իր օրինական իշխանությունը ժողովրդին վերադարձնելու դարավոր գործընթացը շարունակվում է նաև 21-րդ դարում: Անցած երեք – չորս հարյուրամյակների ընթացքում յուրաքանչյուր ժամանակաշրջանի գիտնականները, հիմնականում՝ փիլիսոփաները, քաղաքագետներն ու իրավագետներն իրենց հայեցակարգերը մշակում էին տվյալ ժամանակաշրջանում զարգացումների, հեղափոխությունների արդյունքում ձևավորված իրավիճակները հաշվի առնելով: Ընդունվող օրենքները, առաջին սահմանադրությունները թղթի վրա ընդունելով հանդերձ *«ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին»* բանաձևը, անկարող են եղել ամբողջովին կենսագործել այդ դրույթը:

17-18-րդ դարերում մշակվեց իշխանության, որն իբր, պատկանում էր ժողովրդին, տարանջատման տեսությունը: Ընդունված է համարել, որ այն մշակվել է անգլիացի փիլիսոփա, բժիշկ Ջոն Լոքի (1632 - 1704) և ֆրանսիացի իրավագետ, փիլիսոփա Շառլ Լուի Մոնտեսքյոի (1689-1755) կողմից: Դա, այդ ժամանակաշրջանի համար, առաջավոր լուծում էր, որը ցայժմ կիրառվում է աշխարհի շատ երկրներում:

Իշխանության տարանջատման տեսության ստեղծման ժամանակաշրջանի և դրա տարատեսակ ընկալումների վերաբերյալ բանավեճերը շարունակվում են: Անցած դարավերջին մոսկվացի ճանաչված փաստաբան Պյոտր Բարենբոյմն իր հրատարակած երկու

գրքերով⁵⁹ փորձեց փոխել այն տեսակետը, թե իշխանության տարանջատման տեսությունը մշակվել է 17-18-րդ դարերում: Հեղինակը հիշատակում է տարբեր ազգերի, օրինակ՝ լեհերի, իռլանդացիների աշխարհի ամենահին գրված սահմանադրությունն ունենալու հավակնությունների մասին⁶⁰: Բարենբոյմը գտնում է, որ առաջին սահմանադրությունը գրվել ավելի քան 3000 տարի առաջ, հղում կատարելով Աստվածաշունչ մատյանին: «Սամուելը ժողովրդին հայտնեց թագավորի բոլոր իրավունքները, գրեց մատյանում և դրեց Տիրոջ առաջ»⁶¹: Քանի որ Սամուել մարգարեի գրած սահմանադրությունը մեզ չի հասել, ապա Բարենբոյմը Հին Կտակարանից կատարած քաղվածքներով ինքն է դուրս բերում աշխարհի առաջին սահմանադրությունը, ինչպիսին որ այն, ըստ իրեն, եղել է⁶²: Շատերն են հավանություն տվել այս տեսակետին, սակայն Ռաֆայել Պապայանը չհամաձայնվելով, հերքում է այդ տեսակետը⁶³, ինչը մեզ համոզիչ է թվում: Նա հիշեցնում է,

⁵⁹ «Первая конституция мира, Библейские корни независимости суда», Петр Баренбойм, Москва 1997; «3000 лет доктрины разделения властей суд Сьютера», Петр Баренбойм, Москва, Российская политическая энциклопедия, 2003:

⁶⁰ Վարշավայի գլխավոր տաճարում կառուցված Սահմանադրության հուշարձանը, ըստ լեհերի, վկայում է իրենց ամենահին, ավելի քան 500 տարվա հնություն ունեցող գրավոր սահմանադրության մասին: Իռլանդացիները հավակնում են, որ իրենց սահմանադրությունը շատ ավելի հին է: («Первая конституция мира, Библейские корни независимости суда», Петр Баренбойм, Москва 1997, стр. 35):

⁶¹ Ա. Թագ. 10:25

⁶² «3000 лет доктрины разделения властей суд Сьютера», Петр Баренбойм, Москва, Российская политическая энциклопедия, 2003, стр. 62-67

⁶³ «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 289

որ Սամուել մարգարեից շատ առաջ Հեսու Նավեն նույնպես օրենքներ ու կանոններ է գրել⁶⁴ Իսրայելի օրենքների գրքում՝ որպես հավելումներ: Այսինքն, երկու դեպքում էլ՝ խոսքը ոչ թե առանձին գիրք գրելու, այլ՝ գոյություն ունեցող Գրքում հավելումներ կատարելու մասին է: Իհարկե, Սամուելը ժողովրդին հայտնում է թագավորի՝ գործադիր իշխանությա՛ն իրավունքները և դրանք գրում մատյանում: Դա, ըստ էության, իշխանության թևերից մեկի՝ գործադիրի ձևավորումն էր: Պապայանը, միաժամանակ գրում է. «Այնուհանդերձ, իշխանության երեք թևերի գաղափարը՝ գործառույթների այն նույն տարանջատմամբ, որն առկա է նաև մեր ժամանակների պետական տեսության ու պրակտիկայի մեջ, Աստածաշնչում հստակ ուրվագծված է. «Մեր դատավորը Տերն է, մեր օրենսդիրը Տերն է, մեր թագավորը Տերն է» (Եսայի 33:22)⁶⁵:

4. 4. 2. Բարի կամքի առեղծվածը Հայաստանում

Ըստ լայնորեն տարածված մի տեսակետի՝ Հայաստանի երրորդ Հանրապետության պետական համակարգում շուրջ երեսուն տարի տիրած անարդարությունների, չքավորության, կոռուպցիայի, արտագաղթի ու անպատժելիության պատճառը եղել է իշխանական ուժերի մոտ քաղաքական *բարի կամքի* բացակայությունը: Այլ կերպ ասած, այս տեսակետի կողմնակիցներն այդ բոլոր չարիքներն ուղղակիորեն պայմանավորում են երկիրը կառավարող մարդկանց

⁶⁴ Հեսու 24:25-26

⁶⁵ «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 287

բարոյական նկարագրով: Ըստ այդ տրամաբանության, եթե «չար», «վատ» մարդկանց փոխարինեն «Բարի կամք» ունեցող, «ազնիվ» մարդիկ, ապա՝ եղած հիմնախնդիրները, այդ թվում՝ համակարգային արատները կվերացվեն:

Այդ տեսակետին վաղուց, սպառնալիչ ու համոզիչ կերպով պատասխանել է Շառլ Լուի Մոնտեսքյոն իր «Օրինաց ոգի» գրքում գրելով շատ հայտնի հետևյալ միտքը. «հավերժական փորձը ցույց է տալիս, որ իշխանություն ունեցող ցանկացած մարդ հակված է նրա չարաշահմանը. նա այդ ուղղությամբ ընթանում է այնքան ժամանակ, քանի դեռ սահմանի չի հանդիպել: Ո՞վ կհավատար դրան: Բայց առաքինությունն ինքն էլ սահմանների կարիք ունի: Որպեսզի իշխանություն չարաշահումն անհնար լինի, անհրաժեշտ է այնպիսի իրադրություն, որ ի պայմաններում մի իշխանությունը զուպի մյուս իշխանությունը»⁶⁶: Մեջբերված մի քանի տողերում խտացված կերպով տրված է իշխանության տարանջատման տեսության բուն էությունը և այդ տեսության միջոցով խնդրի որոշակիորեն լուծման ճանապարհը:

«Չար ու բարի ուժերի» առասպելը Մոնտեսքյոնից 260 տարի հետո կրկին ցրելու համար բավական է մի պահ նայել Հայաստանի երրորդ Հանրապետության երեք տասնամյակների պատմությանը: Պաշտոնավարել են չորս նախագահներ, տասնվեց վարչապետեր և ավելի քան երկու հարյուր նախարարներ: Նրանց մեջ սակայն չի եղել գեթ մեկը, որ 1-2 տարի պաշտոնավարելուց հետո

⁶⁶ Շառլ Լուի Մոնտեսքյոն, Օրինաց ոգի, գիրք 11, գլուխ 4-րդ

չարժանանար ժողովրդի դժգոհությանը, անեծքին ու ծանրագույն մեղադրանքների՝ դավաճանությունից սկսած մինչև գողություն և թալան⁶⁷: Ինչու՞ է այդպես: Բոլորն էլ «անազնիվ» ու «չա՞ր» էին: Տեսականորեն՝ հնարավոր է: Գործնականում՝ ոչ: «Բարի կամքի, ազնվության» հետ հույսեր կառուցող մարդիկ ոչ մի կերպ չեն կարող բացատրել այս «առեղծվածը»: Իսկ խնդիրը, ինչպես լավագույնս ցույց է տվել Մոնտեսքյոն, պարզապես համակարգային է:

Առաջադիմության հավակնությամբ որևէ նոր իշխանություն՝ պետք է ինքն իրեն դիտարկի որպես անցումային - հեղափոխական, ֆրանսիացի ճանաչված իրավագետ Ռենե Դավիթի խոսքերով՝ «լուսավորյալ»⁶⁸ իշխանություն, որի պատվաբեր առաքելությունն է՝ նոր սահմանադրությամբ, իրապես ժողովրդավար և այնպիսի համակարգի հիմնումը, որը հետագայում ևս երկիրը գերծ կպահի համակարգային ցնցումներից: Այլ կերպ ասած, նա պետք է լինի այն «լուսավոր սուվերենը», որն ազատ կլինի անցյալի կապերից և նույնիսկ ի վնաս իր ունեցած արտոնությունների, կցանկանա ամրապնդել արդարության, ազատության և անհատի արժանապատվության սկզբունքները⁶⁹: Քաղաքական որոշումներ կայացնողները պետք է այնպիսի փոփոխությունների ձգտեն, որ դրանք ոչ թե 5-10 տարվա համար լինեն, այլ տասնամյակների և հարյուրամյակների, նաև իրենցից հետո կառավարման

⁶⁷ ՀՀ նախկին երկու նախագահների (Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի) և բազմաթիվ նախարարների, բարձրագույն պաշտոններ զբաղեցրած անձանց նկատմամբ քրեական գործեր են հարուցված:

⁶⁸ Рене Давид, Основные правовые системы современности, Москва 1988, стр. 74

⁶⁹ Նույն տեղում:

դեկը ստանձնողների համար, այն հաշվով, որ նույնիսկ եթե այդ ապագա ղեկավարները չունենան անհրաժեշտ «բարի կամքը», բարոյական նկարագիրը, սահմանադրորեն նրանց առաջ փակված լինեն դեպի անիրավություն և բռնատիրություն ետդարձի ճանապարհները:

4. 4. 3. Իշխանության տարանջատման տեսության հիմնադրույթները⁷⁰:

Իշխանության տարանջատման տեսության համաձայն, իշխանությունը պետք է բաժանվի երեք, միմյանցից անկախ ճյուղերի՝ *օրենսդիր, գործադիր և դատական*: Յուրաքանչյուրն իր ոլորտում պետք է բացարձակ, լիակատար անկախություն, ինքնուրույնություն ունենա: Նրանց միջև առկա փոխզույգող հարաբերությունները, լծակները չպիտի վերածվեն ենթակայական հարաբերությունների:

⁷⁰Այս դրույթները նախկինում ներկայացվել են հետևյալ հրատարակություններում և հոդվածներում. «Մարդու իրավունքներ». ձեռնարկ ուսուցչի համար, Վանաձոր, 2002, «Մարդու իրավունքների հասկացությունը», Վանաձոր, 2000, հոդված «Երկու առաջնահերթություն և երկու առաջարկ մարդու իրավունքների պաշտպանության ճանապարհին», Մարդու իրավունքների հեռանկար խաղաղության և ժողովրդավարության համար. Մարդու իրավունքներ, Մարդու իրավունքների կրթություն և փոքրամասնություններ». Պոստդամի համալսարան, 2005, «Իշխանության իրական տարանջատման անհրաժեշտություն է», «Վասն արդարության» իրավական գիտամեթոդական հանդես, 2005, 4 (54)-րդ համար, էջ 2-5, Երևան, «Սահմանաթողություն», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, թիվ 6-7, 10, 11, Երևան, 1999թ. մարտ – հունիս, հոդված «Իրավունքը՝ հայոց պետականության հիմք», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1994թ. ապրիլի 15, «Երաշխավոր, թե՛ ... թագավոր», «Ազգ» օրաթերթ, 1993թ. օգոստոսի 17:

1. *Օրենսդիրը* պետք է մշակի և ընդունի օրենքներ, որոնք պարտադիր են բոլորի համար: Իշխանության մյուս թևերը և տարբեր կառույցներ, մարմիններ կարող են ունենալ օրենսդրական նախաձեռնության կամ առաջարկություններ կատարելու իրավունք: Գործադիր և դատական իշխանությունների հետ հարաբերություններում հավասարակշռման ու փոխզույգման գործառույթն օրենսդիրն իրականացնում է օրենքներ ընդունելու, հարցապնդումների, ոչ դատական կամ վարչական ենթակայության կարգով պաշտոնանկության (իմփիչմենթի) միջոցով: Սակայն Հայաստանի Հանրապետությունում ներկայումս օրենքների մեծ մասը մշակվում է կառավարությունում և նախարարություններում⁷¹: Հետևաբար, օրենքներ ընդունելու միջոցով իրական, գործուն հավասարակշռման գործառույթ օրենսդրի և մյուս երկու թևերի միջև, այս պայմաններում չի կարող լինել:

Օրենսդրական հսկողություն իրականացնելու նպատակով օրենսդիրը չպիտի հետևի դատարանի կայացրած վճիռներին կամ դրանք քննարկման առարկա դարձնի: Դատարանները ենթարկվելով միայն օրենքին (ոչ թե գործադրին կամ օրենսդրին), լիակատար ազատություն պետք է ունենան իրապես ապահովելու համար օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը:

Կառավարությունը՝ որպես օրինաստեղծ գործընթացի օղակ, պետք է դուրս հանվի այդ շղթայից, պահպանելով նրա օրենսդրական նախաձեռնության իրավունքը: Դրանով, կառավարությունը, նախարարությունները կազատվեն «ուրիշի» գործը կատարելու պարտա-

⁷¹ Մեր ունեցած տվյալների համաձայն, Ազգային ժողովի 7-րդ գումարման բոլոր նստաշրջանների ընթացքում ընդունվել է 657 օրենք, որից՝ 535-ը կամ 81,4 %-ը մշակվել է կառավարության կողմից:

վորությունից և կկենտրոնանան բուն կառավարման, գործադիր գործառույթների վրա: Իսկ օրենսդիրը, պետք է լինի արհեստավարժ, համապատասխանի իր անվանմանն ու կոչմանը, մշակի և ընդունի հնարավորինս կատարյալ, արդարացի օրենքներ, ժամանակ չվատնի ժողովրդահաճոքադաքական հայտարարությունների, ցուցադրական գործողությունների վրա, այլ իրապես և ամբողջությամբ ստանձնի երկրում օրինաստեղծ գործառույթը:

2. *Գործադիրը՝* կառավարությունը, պետք է երկիրը կառավարի օրենսդրի ընդունած օրենքներին համապատասխան: Նա չպետք է միջամտի օրինաստեղծ գործունեությանը և պիտի իրավունք ունենա ընդունել բացառապես ենթաօրենսդրական ակտեր: Անթույլատրելի, անբնական է այն իրավիճակը, երբ գործադիրն ինքն է օրենքներ գրում, դրանք մշակում *«ըստ իր հարմարության»* կամ փոխում *«խանգարող»* օրենքները: Սա խաթարում է *իրավունքի տիրապետության* սկզբունքը, որովհետև նշանակում է յուրաքանչյուր նոր կառավարության իրավունք ընձեռել փոխելու և սրբագրելու օրենքներն ըստ իր «հարմարության»: Դա ուղղակիորեն քայքայիչ ներգործություն է ունենում բուն համակարգի վրա՝ ի չիք դարձնելով գործառույթների տարանջատման սկզբունքը: Եթե կառավարությունը չի կարողանում կառավարել գործող օրենսդրությանը համապատասխան, և նրա օրենսդրական նախաձեռնությունները մերժվում են օրենսդրի կողմից, ապա պետք է հրաժարական տա և ոչ թե փոխի օրենքներն ըստ իր հարմարության և կարողությունների: Գործադիր իշխանությունն օրենսդրական նախաձեռնության իրավունքով կարող է և պետք է նպաստի օրինաստեղծ գործառույթին՝ դրանով միաժամանակ հավասարակշռելով օրենսդիր – գործադիր փոխհարաբերությունները:

3. *Դատական իշխանությունը* պետք է իրականացնի արդարադատություն և երկրում ապահովի իրավակարգը, իրավունքի տիրապետությունը և օրինականությունը: Օրենքի առաջ հավասարության և պատժի անխուսափելիության սկզբունքներին համապատասխան՝ յուրաքանչյուր իրավախախտման համար պատասխանատվություն պետք է կրեն և՛ օրենսդիրները՝ յուրաքանչյուր՝ պատգամավոր, և՛ կառավարության անդամներն ու մյուս բարձրաստիճանավոր պաշտոնյաները, և՛ ցանկացած պաշտոնյա ու քաղաքացի, այդ թվում՝ հանրապետության նախագահն ու վարչապետը⁷²:

Արդարադատության, դատական իշխանության անկաշառության ապահովման համար հզոր երաշխիք կարող է լինել *Երդվյալ ատենակալների ինստիտուտը*: Անբացատրելի և տարօրինակ է, որ Երդվյալ ատենակալների ինստիտուտը նախատեսված է եղել 1995թ. Սահմանադրության 91-րդ հոդվածով, ներառված է եղել նաև՝ 1996թ. դատաիրավական բարեփոխումների ծրագրում, սակայն այդպես էլ չի գործել⁷³: Երդվյալ ատենակալների ինստիտուտի, որպես արդարադատու-

⁷² ՀՀ գործող Սահմանադրության 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՀՀ նախագահը «...կարող է պաշտոնանկ արվել պետական ղավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար»: Դա նշանակում է, որ ՀՀ նախագահն անուղակիորեն արտոնվում է կատարելու ՀՀ քրեական օրենսգրքով հետապնդվող, սակայն ոչ ծանր որակված մյուս «արարքները»: Դա, ըստ էության, խտրականություն է և օրենքի առաջ հավասարության սկզբունքի խախտում:

⁷³ Այդ հարցը խորությամբ ուսումնասիրել և վերլուծել է ի.գ.դ. Արթուր Ղամբարյանն իր «*Ինչու՞ հայ ժողովուրդը հրաժարվեց արդարադատությանը մասնակցելու իրավունքից*», աշխատանքում: Հեղ. Հրատարակություն, Եր. 2017: Կատարված վերլուծություններից ընթերցողի համար ակնհայտ է դառնում, որ որոշակի, իշխանություն ունեցող շրջանների կողմից խոչընդոտվել է սահմանադրական այդ նորմի գործադրումը:

յան անփոխարինելի երաշխիքի ներդրումը Հայաստանում խիստ անհրաժեշտություն է:


Դատավորների օրինավորության և բարեվարքության պահանջներն ավելի խիստ պետք է լինեն՝ ըստ արմատավորված «վարքագծի բարձր չափորոշիչների»⁷⁴: Նրանք պետք է բարոյական բարձր նկարագրի մարմնավորում լինեն: Դատավորի կողմից որևէ իրավախախտման, բարոյական նկարագրի խաթարման կասկածի կամ տպավորություն ստեղծվելու⁷⁵ դեպքում պետք է հեշտությամբ իմփիչմենթի՝ Ազգային ժողովի կողմից ոչ դատական կարգով պաշտոնանկության վարույթ հարուցվի: Պետք է դյուրացվի իմփիչմենթի վարույթի հարուցման մեխանիզմը:

Դատարանները պետք է անսահմանափակ լիազորություն և անկախություն ունենան, մանավանդ, որ դրանք չեն կարող յուրացնել ո՛չ գործադրի, ո՛չ օրենսդրի լիազորությունները : Բոլոր դատարանները պետք է օրենսդրական նախաձեռնության իրավունք ունենան, ինչը օրենսդրի հետ հարաբերություններում հավասարակշռման գործոն է: Արդարադատություն իրականացնելիս, դատարանները պետք է նաև արտոնված լինեն կիրառել *իրավունքի ընդհանուր սկզբունքները*, եթե բացակայում են կիրառելի համապատասխան նորմերը:

⁷⁴ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 88, մաս 2:

⁷⁵ Նույն տեղում, հոդված 89, մաս 3, մաս 5:

ԱԶԱՏ ՄԱՍՈՒԼ



Նկար 1. Կառավարման գործառույթների տարանջատումը և թների փոխադարձ հավասարակշռումը:

Դատավորներին, դատախազներին և իրավապահ լիազորություններ ունեցող մյուս բարձրաստիճան պաշտոնյաներին պաշտոնի նշանակող կամ ընտրող մարմինը (պաշտոնյան) իրավունք չպետք է ունենա նրանց աշխատանքից արձակել կամ նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժի, քրեական կամ այլ պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել: Նման ուղղակի կամ միջնորդավորված (օրինակ՝ *Բարձրագույն դատական խորհրդի* միջոցով⁷⁶)

⁷⁶ ՀՀ գործող Սահմանադրություն, հոդված 175, 6-8 – բն մասեր:

փոխհարաբերությունները խաթարում են դատարանների անկախությունը, հետևաբար նաև՝ կառավարման գործառույթների (իշխանության) տարանջատման համակարգը:

Անգնահատելի է *ազատ մամուլի՝ չորրորդ իշխանության*⁷⁷ դերակատարությունը: Այն յուրահատուկ լուսարձակի դեր պետք է խաղա՝ հզոր ճառագայթներով լուսավորելով կառավարման (իշխանության) երեք թևերի գործունեության դաշտերն ու բացահայտելով նրանց ամեն մի քայլը, գործողությունն այնպես, որ ոչինչ ստվերում, գաղտնի չմնա և հանրությանը, յուրաքանչյուր անհատի տեսանելի ու հասկանալի լինեն նրանց բոլոր գործերը: (տե՛ս նկար 1):

Ակնհատ է, որ արդեն 2-3 դար աշխարհի զգալի մասում հաջողությամբ գործադրված *իշխանության տարանջատման հայեցակարգն* աստիճանաբար սպառում է իրեն և իր տեղը պետք է զիջի նոր՝ իրապես արդարացի, չքաղաքականացված իրավունքի և մարդու իրավունքների տիրապետությամբ *նոր հանրային դաշինքի* հայեցակարգին: Այն հանրությանը, ժողովրդին կվերադարձնի ի Վերուստ նրան տրված իշխանությունը և կձևավորի այնպիսի համակարգ, ուր կբացառվի իշխանության հափշտակումը:

⁷⁷ Այս դեպքում «իշխանություն» բառի գործածումը ընդունելի է, քանի որ ազատ լրատվամիջոցներն ինքնին ժողովրդի մաս են կազմում:

4. 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

4. 5. 1. Մարդու իրավունքների էությունը և հատկանիշները

Կառավարման գործառույթների իրական տարանջատման և անկախ դատական համակարգի առկայության դեպքում մարդու իրավունքների պաշտպանության հատուկ, հավելյալ կառույց կարող է չլինել: Այդպիսի համակարգի նախատեսումն արդեն նշանակում է ընդունել պետական մարմիններում համակարգային խնդիրների առկայությունը: Պատահական չէ, որ Շվեդիայում, ուր առաջինն է ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույց, այն ստեղծվել է որպես վարչակազմի նկատմամբ «*պահապան շան*» գործառույթով օժտված հավելյալ հաստատություն՝ «special institution designed to be a watchdog of the administration»⁷⁸

Ժամանակակից աշխարհում որոշակի տարրնկալումներ կան մարդու իրավունքների ուսմունքի և մարդու իրավունքների գործնական պաշտպանության ոլորտում: Այդ խնդիրներն առկա են և՛ միջազգային, և՛ ազգային մակարդակներում:

Հայտնի է, որ մարդու իրավունքները պայմանավորված չեն, չեն ստեղծվում պետության օրենսդրական գործունեությամբ և չեն բխում օրենսդրի ընդունած օրենքներից, այդ թվում՝ հիմնական օրենքից՝ սահմա-

⁷⁸ «Major legal systems in the world today: An introduction to the comparative study of Law», by Rene David and John E.C. Brierley, London, 1985, p. 89

նադրությունից: Հետևաբար, մարդու իրավունքները չպետք է շփոթել իրավունքի, իրավագիտության հետ: Հայտնի է նաև, որ մարդու իրավունքների հարաբերությունները ուժային, իշխանական բնույթի հարաբերություններ են *անհատի* և *պետության* միջև, որոնք այդ հարաբերությունների իրավահավասար սուբյեկտներն են⁷⁹:

Մարդու իրավունքները բնորոշվում են յոթ հատկանիշներով՝ համընդհանրություն, անկապտելիություն, անձեռնմխելիություն, անօտարելիություն, անհատականություն, անբաժանելիություն կամ միասնականություն և մարտնչողություն⁸⁰:

Ճիշտ չէ լայն տարածում գտած մարդու իրավունքների տարանջատումը *«հիմնականի և ոչ հիմնականի, գլխավորի և երկրորդականի»*, ինչը տեղ է գտել բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, ազգային սահմանադրություններում և տեսական, դասագրքային գրականության մեջ: Դրանցից հիմնականը *«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»* 1950թ. նոյեմբերի 04-ին ընդունված Եվրոպական համաձայնագիրն է, որից, ենթադրաբար, այդպիսի բաժանումը ընդօրինակվել է շատ երկրների ու փորձագետների, հեղինակների կողմից: ՀՀ գործող Սահմանադրության 2-րդ գլուխը վերնագրված է՝ *«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները»*: Սահմանադրության 3-րդ, 74-77-րդ

⁷⁹ «Մարդու իրավունքներ». ձեռնարկ ուսուցչի համար, Վանաձոր, 2002, էջ 10-11

⁸⁰Այս հատկանիշներից յուրաքանչյուրի նկարագրությունը տրված է «Մարդու իրավունքներ» . ձեռնարկ ուսուցչի համար, Վանաձոր, 2002, էջ 11-14-ում:

հողվածներում նույնպես ընդգծվում են մարդու հիմնական իրավունքները: Մինչդեռ, պետությունները պարտավոր են ճանաչել, ամրագրել մարդկային բոլոր իրավունքները: Այն դրույթը, որ մարդկային բոլոր իրավունքները համընդհանուր, անբաժան, փոխկապված և փոխկապակցված են, հանգամանալի քննարկումից հետո համընդհանուր հավանության է արժանացել *Մարդու իրավունքների համաշխարհային երկրորդ համաժողովում*, Վիեննայում, 1993 թվականին ընդունված Հռչակագրում և գործողությունների ծրագրում (5-րդ կետ) և վերջնականապես պարզաբանված, լուծված հարց է⁸¹: Անգամ *կյանքի իրավունքը* չի կարելի գերադասել, օրինակ՝ *խոսքի, համոզմունքների ազատության իրավունքից*, քանի որ որոշակի իրավիճակներում, օրինակ՝ իրավապաշտպանների, լրագրողների, որոշակի անհատների համար խոսքի, համոզմունքների ազատությունը կարող է գերադասվել կյանքի իրավունքից: Հետևաբար, մարդկային բոլոր իրավունքները հավասարապես կարևոր են:

Վիճահարույց է նաև՝ մարդու իրավունքների բաժանումը *կոլեկտիվ* ու *անհատական* իրավունքների, քանի որ մարդու իրավունքները մշտապես *անհատական* բնույթ ունեն: Մարդու իրավունքները «ուսմունք է յուրաքանչյուր անհատի մարդկային իրավունքների և ոչ թե նրանց հավաքական շահերի պաշտպանության մասին: Օրինակ՝ խոսելով փախստականների, կանանց, երեխաների, հաշմանդամների իրավունքների մասին՝ պետք է նկատի ունենալ յուրաքանչյուր անհատ փախստականի, երեխայի, կնոջ, հաշմանդամի և ազգային փոքրամաս-

⁸¹ Всемирная Конференция по Правам Человека; Венская Декларация и Программа Действий, Нью-Йорк, 1995, стр. 25

նության ներկայացուցչի մարդկային իրավունքները: Հավաքական մոտեցումն անընդունելի է Մարդու իրավունքների ուսմունքի համար, քանի որ այն հակասում է Մարդու իրավունքների անհատականության հատկանիշին»⁸²:

4. 5. 2. Մարդու իրավունքների գործնական պաշտպանության հիմնախնդիրները

Չորս հիմնախնդիրներ առավել ակներև են ժամանակակից աշխարհի միջազգային և ազգային մակարդակներում.

Առաջին. մարդու իրավունքները հաճախ քաղաքականացվում են՝ աղավաղելով, խաթարելով դրանց բուն էությունը:

Երկրորդ. մարդու իրավունքները և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակներում հաճախ կիրառվում, գործադրվում են քաղաքական շահերի թելադրանքով, երկակի չափանիշներով⁸³:

Երրորդ. մարդու իրավունքների որոշ դրույթներ հաճախ չարաշահվում են՝ առանձին խմբերի իրավունքները

⁸² «Մարդու իրավունքներ». ձեռնարկ ուսուցչի համար, Վանաձոր, 2002, էջ 13

⁸³ Այս խնդիրները նկատի ունեն, անշուշտ, Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանը, խոսելով 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ժամանակ Ադրբեյջանի բանակի ու նրա վարձկանների կողմից քաղաքացիական բնակչության նկատմամբ գործած գազանությունների և միջազգային կառույցների լուրջ մասին: Բեգլարյանը միջազգային կառույցներին մեղադրել է մարդու իրավունքների նկատմամբ «կեղծ պաշտամունքի», և «քաղաքական նպատակահարմարության ու անկարևոր մանդատների ետևում» թաքնվելու համար: Տե՛ս «Ժողովուրդ» օրաթերթ, 2020թ. հոկտեմբերի 16

հակադրելով մարդկանց այլ խմբերի կամ մեծամասնության իրավունքներին, ավանդական, բարոյական, արժեհամակարգերին:

Չորրորդ. մարդկային իրավունքների արժեվորմանը զուգահեռ թերագնահատված կամ անտեսված է անհատի՝ իր ընտանիքի և ընկերոջ, համայնքի և պետության առջև պարտավորությունների գիտակցման և դրանց կրելու անհրաժեշտության հարցը:

Նշված հիմնախնդիրներն ի հեճուկս մարդու իրավունքների հատկապես *համընդհանրության* և *անհատականության* հատկանիշների, աղավաղում են մարդու իրավունքների բուն էությունը, ստվերում դրանց մարդասիրական, բարոյական, բնույթը և հետևաբար՝ պատշաճ գործադրությունը: Դրա հետևանքով, մարդու իրավունքների ուսմունքը ենթարկվում է խիստ քննադատությունների հատկապես ավանդական արժեհամակարգերի կրողների, եկեղեցիների, հավատացյալների կողմից⁸⁴: Խոր անջրպետ է ստեղծվում դիվայնացված մարդու իրավունքների ուսմունքի և հոգևոր կյանքով ապրող աշխարհի միլիարդավոր մարդկանց միջև:

Մարդու իրավունքների աղավաղված, քաղաքականացված, մակերեսային ընկալումները հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է, որ ՀՀ նոր սահմանադրության

⁸⁴ Տես, օրինակ՝ «Ազատություն և Պատասխանատվություն. Ներդաշնակության որոնումներ», Կիրիլ Պատրիարք, Ս. Էջմիածին-2009, էջ 115-133, «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» Ռաֆայել Պապայան, Սբ. Էջմիածին 2002, էջ 17-43, 233-240

մեջ ամրագրվեն մարդու իրավունքների բոլոր հատկանիշները:

Կարևոր է, որ ՀՀ նոր սահմանադրության մեջ համապատասխան գլուխը վերնագրվի *«Մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և պարտականությունները»* և այդ գլխում առանձին իրավունքները և ազատություններն ամրագրող հոդվածները շարադրվեն պետության կողմից անհատի իրավունքը (ազատությունը) ճանաչող և ամրագրող և ոչ թե դրանք շնորհող լեզվական ոճով: Գործող ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում պետությունը ճանաչում և օրենսդրորեն ամրագրում է անհատի իրավունքներն ու ազատությունները և ոչ թե իր կողմից դրանք շնորհում անհատին: Հետևաբար, այդ բաժնի հոդվածներն անհրաժեշտ է շարադրել մարդկային իրավունքները ճանաչող, ամրագրող ոճով⁸⁵, որն ավելի համապատասխան կլինի Մարդու իրավունքների ուսմունքի էությանը և բովանդակությանը, ըստ որի՝ մարդկային իրավունքները ի Վերուստ, ի ծնե տրված են մարդկային ընտանիքի բոլոր անդամներին⁸⁶: Այլապես, կնշանակեր, թե մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը ՀՀ քաղաքացիներն այդ իրավունքները չեն ունեցել: Օրինակ՝ ՀՀ գործող սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասը շարադրված է՝ «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք

⁸⁵ Այդպիսի ոճով է շարադրված, օրինակ՝ ԱՄՆ-ի սահմանադրությունը:

⁸⁶ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, նախաբան, առաջին պարբերություն:

կազմակերպելու իրավունք»: Առաջարկում ենք՝ այն շարադրել հետևյալ ոճով՝ «Հայաստանի Հանրապետությունում ոչ ոք չի կարող մերժել յուրաքանչյուրի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքը»: Կամ՝ Սահմանադրության հոդված 24-ում կարդում ենք. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք»: Առաջարկում ենք այն շարադրել հետևյալ կերպ. «Ոչ ոք չի կարող ժխտել յուրաքանչյուր անհատի կյանքի իրավունքը»:

4. 6. ԸՆԴԵՐՔԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ ⁸⁷

Այս բաժնի հիմնադրությունները հիմնվում են հետևյալ երեք ճշմարտությունների վրա.

1. Հայ ժողովրդի նախորդ սերունդներից ժառանգած երկրի ընդերքը և բնական պաշարները սեփականության իրավունքով պատկանում են ոչ միայն ներկա, այլև՝ գալիք դարերի բոլոր սերունդներին:

Հետևաբար, հայ ժողովրդի այսօրվա սերունդն իրավունք չունի սպառել գալիք սերունդների ունեցվածքը, այն՝ ինչ իրեն չի պատկանում: Գալիք սերունդների իրավունքների այսօրվա բռնադատումները ո՛չ իրավական, և ո՛չ էլ բարոյական արդարացում չունեն: Ներկա սերունդը որևէ «առավելություն», «արտոնություն» չունի իրեն հաջորդող սերունդների նկատմամբ և պարտավոր է պահպանել ընդերքը և ստանձնել

⁸⁷Այս հիմնադրությունները պաշտոնապես, ներկայացվել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին 2019թ. հոկտեմբերին:

«պատասխանատվությունն ապագա սերունդների նկատմամբ»⁸⁸:

2. *Երկիր մոլորակի բնական պաշարները սահմանափակ են: Փոքր տարածք ունեցող Հայաստանի Հանրապետության բնական պաշարներն՝ առավել ևս:*

Որոշակի ճշգրտությամբ, հնարավոր է պարզել, թե Հայաստանի մետաղական հանքերի և բնական պաշարների այսօրվա ծավալներով հետագա շահագործման դեպքում քանի տարի հետո դրանք կսպառվեն և գալիք սերունդներին կմնան միայն պոչամբարներ ու անապատներ: 50, 100, գուցե՝ 150 տարի հետո, դա էական չէ: Էական է այն, որ ոչ մի փորձագետ, գիտնական կամ նույնիսկ մարգարե չի կարող իմանալ, թե երբ է լինելու մարդկության վախճանը, դեռևս քանի՞ սերունդներ են ապրելու մեր երկրի, մեր մոլորակի վրա:

3. *Հանքարդյունաբերությունը տնտեսության կայուն զարգացման ուղղություն չի կարող համարվել, քանի որ այն հակասում է կայուն զարգացման տեսությանը:*

Դեռևս 1987թ. Բրանթլանդի հանձնաժողովը⁸⁹ «կայուն զարգացումը» սահմանել է՝ որպես *զարգացում, որը «հոգալով ներկա կարիքները, չի վտանգում ապագա սերունդների իրենց կարիքները հոգալու հնարավորությունը»*: Սա դասագրքային, անվիճարկելի ձևակերպում է: ՀՀ գործող Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝

⁸⁸ ՀՀ գործող Սահմանադրության հոդված 12:

⁸⁹ 1980-ականներին ՄԱԿ-ը ստեղծեց Բնապահպանության և զարգացման հանձնաժողով, որը հրապարակեց զեկույց «Մեր ընդհանուր ապագան» վերնագրով: Հանձնաժողովն այդպես կոչվում է իր նախագահ, Նորվեգիայի նախկին վարչապետ Գրո Հարլիմ Բրանթլանդի անունով: «Կողմնացույցիկ, մարդու իրավունքների կրթության մանկական ձեռնարկ», Վանաձոր, 2012, էջ 310

«Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»: Սահմանադրական այս նորմը Հայաստանում շարունակաբար խախտվում է: Հանքերը բոլորովին էլ *«ողջամիտ»* չեն օգտագործվում, քանի որ արտահանվում է ոչ թե, օրինակ՝ ոսկյա կամ պղնձե արտադրանք, այլ ընդամենը՝ խտանյութ: Իսկ սահմանադրական *«կայուն զարգացման սկզբունքով»* ղեկավարվելու և *«ապագա սերունդների առջև պատասխանատվության հաշվի առնելու»* դրույթը պարզապես չի պահպանվում, քանի որ ներկա սերունդը ուղղակի ոչնչացնում է գալիք սերունդների ապրելու, գոյատևելու ու զարգանալու պայմանները:

Ներկայացված ճշմարիտ դատողություններից բխում է ճշմարիտ եզրակացություն: Մետաղական հանքարդյունաբերությունը և բնական պաշարների շահագործումը Հայաստանում իրավաչափ չէ, քանի որ խախտում է և՛ ներկա, և՛ գալիք սերունդների իրավունքները, ինչպես նաև անօրինական է, քանի որ ուղղակիորեն հակասում է ՀՀ գործող Սահմանադրության 12-րդ հոդվածին և բնապահպանության ոլորտի ազգային ու միջազգային բազմաթիվ համաձայնագրերի ու օրենքների:

Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ է մշակել երկարաժամկետ ռազմավարական ծրագիր և գործողությունների պլան – ժամանակացույց և դրան համապատասխան աստիճանաբար նվազեցնել մետաղական հանքարդյունաբերության և բնական պաշարների

շահագործման ծավալները՝ ի վերջո այն հասցնելով երկրի ներքին, ռազմական արդյունաբերության և հարակից ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ կարիքների ծավալին:

Հետևաբար, անհրաժեշտ է սահմանադրորեն արգելել Հայաստանի Հանրապետությունում մետաղական հանքարդյունաբերությունը, դա թույլատրելով երկրի ներքին, ռազմական արդյունաբերության և հարակից ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ կարիքների ծավալի չափով:

Անհրաժեշտ է սահմանադրորեն ճանաչել գալիք սերունդների իրավունքներն ընդերքի և բնական պաշարների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վենետիկի հանձնաժողովը 2011թ. մարտի 25-26-ի «Իրավունքի տիրապետության» թեմայով զեկույցում⁹⁰, եկել է այն եզրակացության, որ հնարավոր է համընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) կայացում «իրավունքի տիրապետություն» (Rule of Law) հասկացության բովանդակությունը կազմող հետևյալ վեց տարրերի շուրջ. (1) օրինականություն, ներառյալ՝ թափանցիկ, հաշվետու և ժողովրդավար օրինաստեղծ գործընթացը, (2) իրավական որոշակիություն (3) կամայականության արգելք (4) անկախ և անկողմնակալ դատարանների առջև արդարադատություն, ներառյալ՝ վարչական ակտերի դատական վերանայման հասանելիություն, (5) մարդու իրավունքների

⁹⁰ Report on the Rule of Law, Adopted by the Venice Commission at its 86th plenary session (Venice, 25-26 March 2011), point 41

հարգանք (6) օրենքի առաջ հավասարություն և անխտրականություն⁹¹:

